

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ՏԱՐՈՒ-ՏՈՒՐՈՒԹԵՐԱՆԻ ԹԱԿԱՐԵԳԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

4694

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ

# ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ — — — ՏԷՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ

(ԿԵԱՆԴԻՆ ՈՒ ՊՈՐԾՈՒՆՔՈՒԹԻՒՆԸ)



ՏԱՐՈՒ-ՏՈՒՐՈՒԹԵՐԱՆԻ  
ՄՏԱԻՈՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ  
ԺԹ. ԴԱՐՈՒՄ  
(ՆԵՐԱԾՈՒՅՈՒՆ ԲՈՎՈՒՅԻԿ ԱԿՑՈՒՄԻ)



281.64

ԱԴ-374

ԹԱԼԻՐԻԶ

ԱՅՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄՈԿԱՆ ՅՊԱՐԱՆ

1924

281.69

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ

ԱՆ-376

ՀՅ  
ՀՅ

# ՂԵՒՂԴ ՔԱՂԱՆԱՅ — SԷՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ


(ԿԵՐՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՑԻԹԻՒՆԸ)

1/6  
2  
3

ՏԱՐՈՆ-ՏՈԽՈՎԻԲԵՐԱՆԻ  
ՄՏԱԿՈՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ  
ԺԹ. ԴԱՐՈՒՄ

(Ներածական բռուցիկ ակնարկ)

• Ա 0 1 •



ԱՅՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՀԱՆԱԿԱՆ ՊՈԽԱՎՈՐ ԱՐԵՎԱԿԱՆ

1924



2010

## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Հայաստանի իւրաքանչիւր գաւառն ու քաղաքը ունեցել է իւր ժողովրդական պարզ, համեստ և անձնէր զործիչները, որոնք տասնեակ տարիներ շարունակ, կեանքի ամենազմնդակ պայմաններում, աշխատել, տանջւել և վերջն էլ իրենց անձը զոհել են մեր ժողովրդի պատագութեան զործին և կամ ազգային, հասարակական ու բացայական բարձր զաղափարները քարոզած լինելու համար:

Այդ ժողովրդական զործիչներից շատերը իսպառ մոռացւել են մեր ժողովրդի յիշողութեանը միջից, իսկ ոմանք էլ, իրենց սահմանից յետոյ, արժանացել են մեր մամուլի և կամ պատմական լիշտատակազբութիւնների մէջ մի համեստ տեղ զրաւելու:

Անցեալում, Մայր երկրի մէջ՝ իսկ ներկայիս էլ արտասահմանի հայ զաղութներում՝ եռանդուն աշխատանք է կատարւու, ի զիր առնելու կեանքն ու զործունէութիւնը այն անձերի, որոնք մեր ազգային, քաղաքական, հասարակական, զրական ու կրթա-կուլտուրական շարժումների մէջ, առաւել կամ նւազ չափով, զնահատութեան արժանի մի որեէ դեր են կատարել.

Այժմ նման մի ձեռնարկ է արել նաև Ս.մերիկայի «Տարօն-Տուրութեանի Հայրենակցական Միութեան Վարչութիւնը», որը ժատպիր է հրատարակել Տարօն-Տուրութեանի քաղաքական, հասարակական և կրթական շարժումների պատմութիւնը, 1850 թից սկսած մինչև մեր օրերը. Այս սրտամութիւնը սերտօբէն կապւած է այն անձերի կեանքի և զործունէութեանը հետ, որոնք Մշոյ դաշտում և Տուրութեանուու կարողացել են հասարակական և ազգօգուտ որեէ գործ կատարել:


81720 - օռել  
1299 - 89

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր ժողովրդական այդ համեստ զործիչների շարքում, իւր խոնարհ տեղն ունի նաև Մշոյ դաշտի Ֆրիկ գիւղացի հանգուցեալ Տէր Վենենդ Քահանայ Տէր-Սևեսիսեանը, որը 45 տարի անվհատ և հաւատարիմ կերպով, ուսուցչական և քահանայական ասպարէզներում, ծառայել է իւր ժողովրդին՝ Տարօնում, Վասպուրականում. Ատրպատականում և այլուր, ուստի և մենք, հանգուցեալի հասարակական զործունէութեան վերաբերեալ զանազան վիաստաթղթերը, վկայականները, նրա տպւած գրքերն ու անտիպ ձեռագրերը իրքն ազրիւ ունենալով, կազմեցինք նրա կենսագրութիւնը պատկերացնող այս գրքոյիը, որը թող համարվի մի սպասարկ ձօնւած՝ Մշոյ դաշտում սղջակիպւած, Սրածանիի և Մեղրագետի ջրերում խեղդւած և Սասոնի լինարարձունքների վրայ հերոսարար նահատակւած Տարսուցի հարիւ հազար հայերի անյայտ ու անյիշատակ շիրիմներին և ածխացած ու անմթաղ սսկրակոյտերին, որոնց համար, մերես, Վանի հայրենախօս-լանաստեղծ Գարեգին եպիս. Սրուանձտեանը գրել էր իւր այս տողերը.

«Լուսին, լուսին աչխովդ անքուն,  
Պահէ՛ Հայոց ոսկուներ,  
Եւ մայիսի զուարք ցողով,  
Ցողէ՛ անոնց ժրիմներ...»:

24 Յունի 1924 թ.  
Թաւրիզ

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ



ՊԵԽՈՆԴ ԳԱՀԱՆՈՅ ՏէՐ-ԱԽԵՏԻՑԵԱՆ

«...Անքայս եմ ես Տարեացի,  
Եաւ ժամանակ պահպուխտ մնացի,  
Յաւօք սրի ես միւս լոցի,  
Մոյ եւկրին կառօս մնացի...»

ՏԱՐՈՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ  
ՄՏԱԿՈՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱՇՆՈՒՆԴԸ  
ԺԹ. ԴԱՐՈՒՄ  
(Թռուցիկ ակնարկ)

Համամարդկային պատմութեան մէջ ԺԹ-ըդ դարբ, ազգերի մտաւոր ու քաղաքական վերածնութեան զործում, մի նոր դարավլուխ է համարում: Մարդկային կաշկանդւած միտքը ազատուում է խր կապանքներից և արդարութեան, հաւասարութեան, ազատ խօսքի, խզի ու մըտաւոր յառաջադիմութեան ոլորտներում նորանոր թոփչքներ է կատարում:

Սրեմուտրում կուլտուրական, մեծ ու փոքր ազգերը ժամանակակից իրական պահանջների համաձայն են դասաւորում իրենց զիտական, գրական և քաղաքական կեանքը:

Դարի սկզբում ազատուում է Յունաստանը, որի քաղաքական անկախութիւնը ազատասիրական նոր ողի ու եռանդ է ներշնչում Թիւրքիոյ լծի տակ ապրող փոքր ազգերին, ի թիւս որոնց նաև Հայերին:

Հայ մտքի վերածնութեան անմահանուն ջահակիրները—գրական ու հասարակական գործիչները—արեելահայերի և արևմտահայերի մէջ, աշխատում էին տարածել նախ զիտութեան ու մտաւոր յառաջադիմութեան ազգակները, ժողովրդին զատիւրակել բարոյալէս, նրան հասցնել ինքնազիտակցութեան և ինքնաճանաշման աստիճանին, որից յետոյ էլ ժողովուրդը ինքն իր ձեռքով կը դարբնէը իր քաղաքական կեանքը. Այս խտղաղ ու կուլտուրական աշխատանքով էր ահա կառուցում Հայոց ազատազրական շարժումների և քաղաքական անկախութեան նւիրական

շինքը, որի հիմնաքարերն եղան՝ Հալ ժողովրդի մտաւոր ու բարոյական դաստիարակութիւնը, մայրենի լեզվի աշխաքհականացումը և մամունի ու գրականութիւնը:

Օ՞ն, ուրեմն դէպի աշխատանք:

Արարատի յաւերծական ձիւնածածկ գագաթի հոգանու ներքոյ «Հանճարեղ սիրտ» Խաչատուր Արովեանը իւր իսկ գեղջուկ բարբառով հնչեցրեց իւր ձայնը, Հայրենասէրի իւր նղը, արձանացնելով «Աէրը Հայաստանի» ն:

Արևելահայ մտաւոր ու գրական վերածնունդը Արովեանի «Աէրը Հայաստանի»-ով սկսւց, Միքայէլ Նալբանդեանի ըմբուտ հոգով և մարտնչող խօսքով գարգացաւ, Ստեփաննոս Նաղարեանի «Հիւսիսափայլ»-ով հիմնաորւց, Դամառ-Քաթիպայի «Մայր Արաբսի Արտասուրով» և ուղմաշունչ երգերով ոգեսրւց, Գրիգոր Երծրունու «Մշակ»-ով և հասարակական գործչի երկաթեայ կամքով իր կոչման արժանի բարձրութեանը հաստ և վերջապէս միծատաղանդ Բաֆֆին, իւր ազատազրական ու տպայնական վէպերով. Հայոց մտաւոր ու քաղաքական վերածնութեան ճամբռու վրայ փառքի և յաղթանակի կոթողները կանգնեցրեց:

Ի՞նչ էին անում արեմտահայերը:

Ֆրանսիական յիշափոխութեան շնչով դաստիարակւած հայ երիտասարդութիւնը և. Պալսում և Խպմիրում ջանք ու ճիգ էր թափում հայ հասարակական թմբածկեանին նոր ուղղութիւն և ազատ ու անկաշկանդ գարգացում տալու. Մամուն ու գրականութիւնը օրից օրյառաջադիմում էին.

Սակայն կենտրոնը անտեղեակ էր այն ամեն տեսակ տանջանքներով լի կեանքին, որն ապրում էր բուն Հայ ժողովուրդը՝ Մայր Երկրում - Վասպուրականում, Տարոնում, Բարձր Հայրում, Սերաստիայում, Խարբերդում, Տիգ-

րանտկերտում, Կիլիկիայում և Փոքր Ասիոյ խորքերում:

Արևմտահայ վերածնութեան ուահվիրաները - Գը. Օտեանի, Յժ. Նահապետ Թուսինեան, Ստեփան Ոսկան, Նիկ. Պալիկան և ուրիշները չկարողացան Կ. Պոլսից անցնել զաւառները և գործել բուն Հայ ժողովրդի մէջ:

Տաճկաստանի Հայկական նահանգներում զաւառացի Հայերին էր վերապահաւած իրենց իսկ ջանքերով ծնունդ տալ Հայ մտրի և բաղարական զարթօնքին, որի անդրանիկ ներկայացուցիչը Ա.ասպուրականն ի յայտ բերեց, Հայ աշխարհին ընծայելով իւր մեծ հայրենասէր Խրիմիան Հայրիկին, որը կէս դար շարունակ հայ ժողովրդի ազատասիրական և ազգային զգացումների հանճարեղ արտայայտիչը հանդիսացաւ, ձեռք բերելով անսահման ժողովրդականութիւն, շնորհի իւր բարոյական բարձրութեան, խօսքի ու զրչի զրաւչութեան, զգացումների անկիզմութեան և հարազատ ժողովրդասիրութեան, որի իսկական մարմնացումն էր նա - «Նւագող վշտից Հայրենեաց Հայոց Հայրիկը»:

Վանի մշտածիծաղ երկնքի տակ, Վարագայ լերան բարձրունքներից և ծիծաղիստ ծովի վրայից 1857 թւի զարնան, իւր թները թափահարելով սլացաւ. «Արծուի Վասպուրական»-ը, Հայաստանի անդրանիկ լրագիրը «Թըռուցեալ Հայրենասէր թնօր, յԱրծրունի մննաստանէն Վարագայ» խմբագրութեամբ «Հայրենախօս Մկրտիչ Վարդապետ Խրիմիան» իւ

«Ո՛՛ Ի՞ն ո՞վ բոյնո չենադ Վարագ.

Սլանում, բոչի՛մ ըղձիւս անհուն...»:

Այս էր «Արծուի Վասպուրական»-ի առաջին խօսքը:

Սակայն թողնենք «Արծուի Վասպուրական»-ն իւր տեղում և Խրիմիան Հայրիկի հետ մասնենք Տարոնի աշխարհը և տեսնենք թէ ի՞նչ է անում նա այնտեղ:

Տիրող տարրերի ծանր լծի տակ, Մշոյ դաշտում՝ լուռ ու յուսահատ տնքում էր հայ ժողովուրդը, որը միաժամանակ խարխափում էր մտաւոր խաւարի և տղիտութեանը մէջ։

Մի զօրաւոր ձեռք, մի բարձր հոգի, մի կարնկցող սիրտ էր պէտք, որ կարողանար Մշոյ դաշտում կատարել զերագոյն և անձնւէր մի աշխատանք—սթափեցնել հայ ժողովուրդը իւր ստրկական կեանքից և մտաւոր խաւարից ու նրան տանել դէպի գիտութեան լոյսը։

Տարոնի աշխարհը կարօտ էր այդ կարեկցող սրտին, այդ բարձր հոգուն, այդ զօրաւոր ձեռքին, որոնք պիտի մարմացնէին մի Մեծ Հայրենասէր Հայ անձ։

Խեիմեան Հայրեկն էր այդ, որը 1860 թւին Վահից ուղեորեց դէպի Մշոյ դաշտը, հովելու համար տեղւոյն հայութիւնը։

Իւր բարոյական ու հայրենասիրական քարոզներով Խրիմեանը հնչեցրեց իւր ձայնը Մշոյ գաշտի հայութեան մէջ։ Մտաւ ամեն հայ զիւղը, կարեկցեց ժողովրդին, ապրեց նրա վիշտն ու տառապանքը, ըմբռնեց նրա հոգեկան պահանջները և եղրակացրեց, որ առաջին հերթին պէտք էր այս ժողովրդին ուսում և կրթութիւն տալ, դաստիարակել նրա նոր սերունդը, մտաւորապէս լուսաւորել նրան, որ կարողանար յետապայաւմ ըմբռնել ազատութեան և քաղաքական անկախութեան անմիջական անհրաժեշտութիւնը։

Խրիմեանը զործի է անցնում և առաջին առթիւ իսկ, պատմական Սուրբ Կարապետի վանքում, բաց է անում Ժառանգաւորաց Գիշերօթիկ Վարժարանը, հաւաքելով այնակազմ մշեցի պատանիներին և երիտասարդներին, տալով նրանց ժամանակակից առողջ և անկաշկանդ դաստիարակութիւնը։

Նման մի դպրոց ես բաց է անում Ս. Առաքելոց վան-

րում։ Դիւզերում բացւում են ծխական դպրոցներ և մայրենի ուսումն պարտադիր է դասնում գեղջուկ մանուկների համար։

Այսպէս Մայր Երկրի հայութիւնը սթափւում էր իւր ծանր ու խոր քնից և շարժւում էր զէպի լուսոյ և յառաջադիմութեան ուղիները, երբ մի խումբ արևմտահայ ազատաօէր և մարտնչող երիտասարդներ — բազմերախտ Գր. Օտեանը, բժ. Ն. Ռուսինեանը, Նիկ. Պալեանը, Գր. Ազաթօնը, Ստ. Ուկանը և ուրիշները — գլուխն անցան աղգային ու քաղաքական այն խաղաղ շարժման, որի արգիւնքը Հայոց Ազգային Սահմանադրութիւնն եղաւ, 1860 թ. 24 Մայիսի։

Ազգային Սահմանադրութիւնը արևմտահայ մտաւոր և ազգային վերածնութեան փաստական գոյութեան հաստատուն հիմնաքարն է կազմում։ Հայ ժողովուրդը իր ընտրած մարմններով զեկավարում էր իւր ներքին կեանքը — կրօնական, ազգային, զպրոցական և հասարակական խնդիրները։ Ազգային Սահմանադրութիւնը մի ուժեղ խըթան եղաւ արևմտահայ ժողովրդի արագ ինքնազարգացման և հասարակական յառաջադիմութեան, որի արդիւնքը ցայտուն կերպով ի յայտ եկաւ ոչ միայն Կ. Պոլսում և Խզմիրում, այլև Մայր Երկրում։

Ազգային Սահմանադրութեան այս բուռն շրջանին էր ահա, որ Խրիմեանը 1862 թւին, Մշում—Ս. Կարապետի մենաստանում, հիմնում է «Արծուիկ Տարոնոյ» լրագիրը իր իսկ խմբագրութեամբ, սակայն երբ ինքը 1869 թւին ուղեորւում է Կ. Պոլիս, իբրև Թիւրքիոյ Հայոց պատրիարք, թերթին խմբագիր է նշանակում իւր արծւածագ Սրբանձրտեանին, որը պատով շարունակում է իւր Մեծ Ռւսուցչի Մեծ Գործը։ Տեղը չէ այս էջերում մանրամասնութեամբ խօսելու այն մեծ և անգնահատելի գերի մասին, որը կա-

տարել է «Արծուիկ Տարոնոյ» լրագիրը Տարոն-Տուրուբերանի Հայութեան համար:

Տարոնի Հայութեան մտքի և հոգու վրայ իշած տղիտութեան մշտին ու խուարը փարատւել էին և լեռանց բարձունքներից ոսկեվառ շողերով ծագել էր Տարոն-Տուրութեանի մտաւոր վերածնուրեան աւշալոյսը, որի ճառապայմաները թափանցել էին մինչև գիւղական խրճիթների խորքերը, ուր հայ խօսքն էր հնշում և ազգային ինքնապիտակցութեան և ազատափրական տեհնչերի մրմուն. Հըն էր արձագանգում ամեն մի հայի բերանում:

Հայոց Հայրիկի շնչով դաստիարակւած սերունդը խորապէս ըմբռնել էր իր զերն ու կոչումը, որը կայանում էր «Ժողովրդով և Ժողովրդի համար» նշանաբանը կեանքում գործադրելու մէջ, Մէկ խօսքով Տարոն Տուրուբերանի հայութեան սրտում առկայժելով վառւել էր ըսկում մտաւոր ու բաղարական գարթօնքի խարոյկը, որը պէտք էր առաւելս հրահըել ու բորբոքել.

Եւ այդ սրբագան աշխատանքն էլ վերապահւած էր Խրիմեանի աշակերտներին ու յաջորդներին, խաչի, զրշի և սուրբ՝ ժողովրդական, անձնելք և անպաճոյն հոգեորական և աշխարհական այն հարիւրաւոր գործիչներին, որոնք միանաբար կում յաջորդաբար, տևելի ծանր, բայց աւելի լայն սահմաններում, շարունակեցին իրենց Մեծ Ռւսուցի Մեծ Գործը:

Այսպէս Տարոն-Տուրուբերանի հայութիւնը իւր մտաւոր գարթօնքի եւանդուն շրջանն էր ապրում, երբ 1878 թ. Բեյլինի վեհաժողովից յուսախարւած Հայ ազգային ու հասարակական զեկավար մարմինները և. Պոլսում, Իզմիրում, Տաճկահայաստանի հայաբնակ կենտրոնական բազարներում և Կովկասում, որոշում են նւիրւել հայ ժողովրդի մտաւոր գաստիարակութեան գործին և բարձրա-

ցընել նրա բարոյական ու ազգային հասկացողութեան մակարդակը. Այս նպատակով ամենուը եր հիմուում էն հասարակական, կրթական և բարեգործական ընկերութիւններն ու միութիւնները, որոնցից մէկն է նաև «Հայոց Միացիալ Ընկերութիւնը», որի նպատակն էր Տաճկահայաստանի հայութեան մէջ տարածել գպբոցական ազատ դպտիարակութիւն:

Եւ ահա Հայոց Միացիալ Ընկերութիւնը Մեծ Հայքում բացւած իւր գպբոցներին ընդհանուր տեսուչ է կարգում ողբացեալ և վաստակաւոր Մկրտիչ Սարբեանին, որը 1882-ին շրջում է Տաճկահայաստանում կենտրոն ունենալով Մուշ քաղաքը, ուր բաց է անում Կենտրոնական զրպոցը:

Այժմ արդէն Սարբեանն է Տարոնի հայութեան կըրթական առաքեալը, որը կարողանում է կազմ ժամանակայ ընթացքում դաստիարակել և ժողովրդին ընծայել այն սերունդը, որի միջից լուսաստղի նման փայլեցին Մարգար Վարժապետը, Հրայրը, Մշոյ Գեղամը և զեռ շատշատիրը:

Տարաբախտ Սարբեանը կեանքի ամենածանր պայմաններում, հինգ տարի գործեց Տարոնի Աշխարհում, մինչև որ Տաճկաց կառավարութիւնը 1886 թւի Դեկտ. 15-ին նրան ձերբակալեց Ալաշկերտում և արսորեց:

Այդ վաստակաւոր և բազմարդիւն գործիշը մինչև իր կեանքի վերջը հալածւեց, տանջւեց և տառապանքի ու թշւառութեան մէջ կնքեց իր մահկանացուն 1900 թւի Յունարի 10 ին, իգմիրի հիւանդանոցում:

Սարբեանը աքսորւելուց յետոյ, նրա գործը շարունակեցին Մ. Տամատեանը, Վահան Մօղեանը, Դուռուխեանը, Մարգար Վարժապետը և զեռ գաղափարական ու մտաւորական գործիչների մի ընտրեալ խումբ, որի իւ-

բարանշիւր սնդամբ անձնւիրաբար ծառայել է Տարոն-  
Տուրուբերանի կրթական և կուլտուրական յառաջադիմու-  
թեան գործին:

Այսպէս 30 տարւայ ընթացրում—1860-1890—Տա-  
րոն-Տուրուբերանի հայութիւնը արգին հասարակական ինք-  
նաճանաչման, ազգային ինքնազիտակցութեան, գլո-  
ցական դաստիարակութեան և ազատասիրական տենչերի  
ոլորտներում և ասպարէզներում զգալի յառաջադիմութիւն  
էր կատարել:

Այժմ հերթը քողարական և ազատասիրական պայ-  
քարին էր հասել և ժողովուրդը պարտաւոր էր այդ աս-  
պարէզում ես ցոյց տալու իւր ընդունակութիւնները.

Ընդվկումներն ու ապստամբարական ցոյցները, մասնա-  
կի կոիւներն ու զինական ընդդիմութիւնները իրարու ե-  
տեից ծայր առին 1890 թից սկսած, զուտ քաղարական  
հոդի վրայ, թէ 1880-ական թւերի վերջներում էլ մի  
քանի ցոյցեր կատարւել էին թէ Տարոնում և թէ այլուր:

Եւ ահա վերջապէս 1894 թիւր, երբ զիւցազների  
լիոնաշխարհը—Սասունը—ապստամբում է տիրող քաղա-  
րական տարրի գէմ, ցնցելով ամբողջ քաղարակիրթ աշ-  
խարհը:

Այս պատմական, բայց ահաւոր ու արիւնալի գիւ-  
ցազնամարտը, որն ի յայտ բերեց Սասունի և Մշոյ Գաշ-  
տի հայութեան ռազմունակ հոգին ու պայքարելու անը-  
ման կորովը, եղաւ Տարոն-Տուրուբերանի ազատազրական  
շարժումների և ապստամբական ու գիւմազրական բոլոր  
պայքարների մայրը, որից ծնունդ առին այն բոլոր մեծ  
ու փոքր զինական շարժումները, ֆիզայական, պարտիզա-  
նական կոիւները և ռազմական զանազան գործողութիւն-  
ները, օրմնը զարդարում են Հայոց ազատագրական շար-  
ժումների պատմութեան արիւնութեան էջերը.

Հայկական Ազատագրութեան ահազանգը հնչել էր և  
դոդանջներն արձագանգում էին պատմական Հայաստանի  
ամեն կողմերը—Սրաբատի ստորոտից, Արագածի լանջե-  
րից սկսած, Վանի ծովի շորս ափերից մինչև Մշոյ դաշ-  
տըն ու Դուրան-Բարձրավանդակը և այնտեղից էլ մինչև  
հեռաւոր Տաւրոսի լիոնարարձունքներն ու Զէյթունի անա-  
ռիկ քարաժայուերը:

\* \* \*

Հայոց նորագոյն պատմութեան մէջ մեր վերջին քը-  
սանհինգամեակը—1890-1915—իւր արիւնալի և հերոսա-  
կան ընդգումներով, զիմադրական և սքանչելի ռազմա-  
կան գործողութիւններով, Հայկական ինքնազիտակցու-  
թեան և քաղարական անկախութեան բազմատեսակ որո-  
նումներով և վերջն էլ համահայկական ընդհանուր կոտո-  
րածներով մի առանձին տեղ է զրաւում։ Եւ այդ քան-  
հինգամեակում իւր պատւաւոր և բացառիկ տեղն ունի նաև  
Տարոն-Տուրուբերանը, որի տարաբախտ հայութիւնը 1915  
թիւ ամբան, օրհասական պայքարից յիտոյ ընկաւ և նա-  
հատակւեց իւր Հայրենի հողի վրայ, որի սրտում ապրող  
հայութեան՝ մտաւոր դաստիարակութեան, ազգային ինք-  
նազիտակցութեան, բարօրութեան, ազատութեան և քա-  
ղարական անկախութեան համար, մօտ վաթսուն տարւայ  
ընթացրում, յաջորդաբար կամ միասնաբար, սերունդից  
սերունդ, աշխատեցին, տանջւեցին և իրենց կեանքը զո-  
հարերեցին այն բոլոր հոգեւորական, կրթական, հասար-  
կական, յիղափոխական, ուղղմիկ, հերոս և մէկ խօսքով  
խաչի, զրշի և սուրի մշակներն ու գործիչները, որոնց լու-  
ստավակ և անմահ անունների յիշատակութիւնն անելով  
այս էջերում, մի մի բառական որակումներով ուրեազած  
կը լինենք պատկերները այն անձերի և զործիչների, ո-  
րոնք 1860 թից մինչև մեր օրերը, Տարոն-Տուրուբերանի

հայութեան մտաւու ու քաղաքական վերածնուրեան ռէնքը կերտեցին. Այդ ռէնքի հիմքերը հաստատաւած են Սալոյ Զօրից սկսած՝ մինչև Մշոյ դաշտում, Գուրան-Շարձրավանդակի վրայ և Տարոն-Տուրուբերանի ամեն անկիւնները ուր Հայ խօսքն է հնչել, ուր Հայ սիրտն է բարախել, ուր Հայ զինքն է շաւաշել և ուր Հայ արինն է հոսել. Այդ Շէնքը կայ ու կը մնայ հաստատ և ամուր, ամեն մի հայ սրտում, ամեն մի հայրենասէրի գիտակցութեանը մէջ:

Մէնք այժմ անսահման երախտազիտութեամբ, խորին պատկառանքով և ազգային նւիրական զգացումներով տուլցուն, արձանագրում ենք անուններն ու սրակումները այն գաղափարական վարպետների, անձնւէր մշակների և վտառակաւոր ու բազմատանջ աշխատաւորների—լինեն նրանք նահատակւած, մնուած կամ կենդանի—որոնք Տարոն-Տուրուբերանի մտաւոր ու բազարական վերածնութեան սրբազն գործին, նուիրաբերեցին իրենց հոանդն ու աշխատանքը, իրենց ուժն ու կորնքը, իրենց գիրն ու գրականութիւնը, իրենց մարտնչող հոգին և ըմբոստ խօսքը, իրենց խաչն ու սուրբ և մէկ խօսրով իրենց ամբողջ կեանքը.

Ահ, ուշադրութամբ, երկիւզածութեամբ լսեցէք այդ անունները և ձեր յիշողութեանը մէջ պատկերացրէք նըրանց ամբողջ կեանքն ու գործունէութիւնը՝ Մայր երկրում, յանուն Հայ ժողովրդի ազատագրութեան սուրբ գործին:

Յիշեցէք, որ նրանցից ոմանք ճօճւեցին կախազանների վրայ, ոմանք՝ խոշտանգւեցին բանտերում և աքսորներում, ոմանք՝ ընկան դաւաճանների ձեռքով, ոմանք զլխատւեցին արիաբար, շատերն ընկան զէնքը ձեռքին՝ հերոսաբար կռւելուց յիտոյ.

Նրանցից շատերն այժմ զերեզման չունին, հիւսիսի ցրտաշունչ բամին բշել է նրանց աճիւնները և թա-

դել է Մշոյ դաշտի տաքուկ հողի և անուշ ջրի մէջ: Վանի ծովի նազելաշուր ալիքների մեզմիկ խշոցը և Միփան ու Նեմրոթ սարերի բաղցրիկ հովը խառնւելով Արածանիի ու Մեղրագետի մալուլ ու տիսուր ջրածայներին, օրօր են ասում նրանց յայտնի և անյայտ, անտապան, անարձան և անյիշատակ շիրիմներին՝ մինչև «Բացիին գունեն յուսուլ...», «Մինչեւ Հայոց գարունը գայ...»:

Այժմ բանանք, լայն ու ազատ բանանք միը սրտերի նւիրական անկիւնները և այնտեղ՝ խնամրով ու երկիւզածութեամբ արձանագրենք ու պահենք յաւերժ անմահ ու անմոռաց այս անունները.

Վասպուրականի Արծիւը—Խըրիմեան Հայրիկը «Նուագող վշտից Հայրենիաց Հայոց» և Դարեգին եպիս. Սրուանձտեանը հայրենախօս բանատեղծ:

Թուշնիկ Գրիգորիս եպիս. Ալէաթճեանն ազգանուէր և Յովսէփի վարդապետ Մարածեանը ժողովրդասէր:

Ծերունազարդ Վարդան վարդապետը ազգային—հասարակական վտառակաւոր հովիւ և Մովսէս Մարկաւազը կղերական ասպետ:

Մկրտիչ Սարքեանը կրթական գործի մեծ ռահվիրան և Եկեղեցեանը ջահակիք. և սրանց գործակից Վահան Մօղևանը, Յալութիւն Դուդուխեանը, վանեցի Եղիշէ Գոնտակիշեանն ու Յովհաննէս Կուլողիանը «Դիւանա Բահլուլ» և Սիսակ Գուեսմիճեանը:

Վանեցի Յովհաննէս Սպրիպասեանը, Վարդան Գոլօշեանն ու ու Թիֆլիսեցի Արշակը՝ ազատագրական շարժման անդրանիկ առարկեալ—նահատակները:

Վարդենիսցի Մարգար վարժապետը յեղափոխութեան յառաջիթաց հրատիրակ-նահատակ և «Տատարկ Տարոնոյ» բաղցրակեզու Մշոյ Գեղամ Տէր Կարապետեանը բնատոհմիկ զրամշակ:

Լզեցի Լևոն, Գոմերցի Դուկաս և Դերիկցի Խաչիկի վարժապետները՝ ազատահեր նոր սերնդի դաստիարակները:

Արարոն՝ սարսափելի և առաջին վրիժառու ռազմիկը և իւր գինակիցները՝ Դերկեվանցի Մխօն, Ասլանն անսասան, Ալիզոնանցի Լևոնը, Բուլանցի Փօթէհան Նազօն, Մշեցի Հաջի Նազիկը, Կոտոյեան Հաջի Յակոբը՝ յառաջապահ մարտիկները և Պօլուան Մկրտիչը (Մճօն) ռազմունակ և քաջազին:

Միհրան Տամատեանն ու Համբարձում Բոյեաջեանը (Մուրադ) յեղափոխական ուսհիբրաները և ապստամբութեան անդուգական քարողիչները:

Սասունցի Իշխան Պետօն, Ենիկցի Հերոս Գրգօն, Սպաղանցի Մակարը քաջորդի, Սասունցի Զօլօն ու Թօրոն լեռնական բաջ գինուրներ և Սասունի դիւցազնուհի Ջարէն իւր շուշանազարդ ձագուկով:

Թարգմանչաց վանքի՝ Ցովհաննէս, Ս. Ցովհաննու վանքի՝ Հազար և Զաքար, Գոմոց վանքի՝ Մտեփան և Հեղինցի Վահան վարդապետները միշտ ժողովրդանւէր:

Գոմերցի Տէր Սարգիս, Խասպիւղցի Տէր Քերոբ, Զըրիկցի Տէր Մուշեղ, և Նորագինցի Տէր Ցովհաննէսը՝ խաշկիր և գինակիր քահանաները:

Զէյթունցի Ռուբէնը բազմաշարաշար և Ախլքալարցի Աբրօն անձնէր:

Կարսեցի Դուրբախն անվեհեր և Ներսէս Տարազն երկաթակամք:

Նեմրութի հսկան, լեռների ասլանը, Սասունի վաշան, Տարոն—Ցուրուբերանի Հայութեան ուսկմական հոգու աղբիւրը, ջանֆիդայապետ Սերոբ Աղբիւրը, և իւր կին հերոսուհի Սօսէն, որդին՝ Յակոբը, եղբայրները՝ Մխէն ու Զաքէն և հօրեղբօրդին ձարտար Յակոբը քաջակորով:

Բիթլիսցի Ազրայէլ Միմոնը, Եղդանենց Մուշեղը խիզախ, Դատուանցի Աշոտը և Վարդենիսցի Բարսեղը, Կըծուակցի Առիւծ Աւագն առիւծակերպ, Ուրտափցի Փալաբեղ Կարապետը վազրասիրտ, Թեղուտցի Աստուրն ու Նազօն, Խնձորքնայ Նազօն, Թոնդրասցի Նազօն և Պասեցի Զուլումաթը զարհուրելի, Խարաղլցի Սարգիսն ու Պոռեցի Աւետիսը՝ Հայ ռազմական ոգու սքանչելի մարմնացումները և միշտ անձնազոհ հայդուկներ ու ջանֆիդաները: Ժողովրդի սիրելին՝ Գողթանցի Գուրգէնը և իւր անրաժան գինակից՝ Փարսաղանը:

Մշեցի Տիգրանը բազմագործ և իւր քաջ ընկերները՝ Ախջանցի Ռուբէնը, Բուլանցի Մկրօն և Զինւոր Նշանը.

Խանասորի և Խաստուրի հերոսն Աւգալը քաջագործ. Ղազարն անընկճելի և Կոստին ու Մակարը՝ յանկուգն ահարեկիչներ:

Թոնդրասցի Միքայէլն ու Խօշգեալզուեցի Գասպարը, Ծէխեաղուրցի Կարապետը և Սամուէլն ու Մխիթարը՝ պարտաճանաչ հայդուկներ:

Քարառուեցի Սեղրակը ժողովրդապաշտ և իւր զինակից ընկերները՝ Ցօննցի Սարօն, Կուրաւցի Քիւրդ Բարսեղն ու Նազարը:

Սէմալցի Մանուկն ու Ենիկցի Միքայէլը, Ցխաւցի Յարութին ու Աւրանցի Ասօն, Գառներցի Մկրտիչն ու Դերկեվանքցի Վարդանը, Մոկունցի Դաւիթին ու Ղազարը, Ասինցցի Սահակն ու Ռդունցցի Մխիթարը, Գոմերցի Ցովիկն ու Քիւրդմէլպանցի Գրգօն, Հայկ Տէր Վարդաննեանը, Սորգարցի Տիրանն ու Մեղեցի Սիսակը, Զիարաթցի Զաքարն ու Բաղլուեցի Ցովօն բժ. Յակոբ Հորմուզեանը, Եօնջալուեցի ճգնաւոր Մկրտիչ Սարեցի Մուշեղ Թէրզեանը, Ծէխեաղուրցի Մկրտիչը, վարժապետ Տիտանը և Եկնախօցի Մանուկ Ֆարօնակը. Քիթլիսցի Արմենակ Յոիսիկ-

հանն (Սլոք) ու Աւետիս Երկանեանը, Յովսէփ Բարսեղ-  
եանն ու Պօղոս Օզօհանը, Փրխուսցի Զանօն և Պօղոսը,  
Դատուանցի Դանիէլը, Զըխորցի Յակոբն ու Թուխեցի Ա-  
ջամը, Խնուսցիներ՝ Ստհակ Մխիթարեանն ու Սիմոն Տէր-  
Յովհաննիսեանը, Եսաւ Մալոհանն ու Արօսցի Հրաշեայն՝  
Տարոն-Տուրուրեանի հայութեան հասարակական և յեղա-  
փոխական անձնուրաց գործիչներ և դեկավարները:

Հայաստանի լեռների արծիւր, Հայկական Գարիբալ-  
դին և Ազգային Մեծ Հերոս Սնդրանիկը և Երկրորդ Սա-  
սունցի Դաւիթը՝ Գէորգ Չափուշն ահարկու և բաշտպարմ:

Սև-Քարեցի ազիդ Սարօն ջիւան, Վահան Տողրամաճ-  
եանը մեծանոցի և Երկաթը (Արմենակ Լեռնեան), դեկավար  
գործիչները ժողովրդապաշտ:

Թորգոմը (Թուման Թումանան) անձնազոհութեան մարմ-  
նացում և Մշեցի Կայծակ Վաղարշակը կորովամիտ:

Սուլուխցի Առիւծ Սերոբը իւր կորիմներով:

Ալաշկերտցի Թոխմախը ծանրաբարոյ և Բիծո Պօղո-  
օը մահաշխ:

Սեբաստացի Հերոս Մուրադն սրանչելի, Բարերդցի  
Երկաթարզուկ Սեպուհը շանթող, Կարնեցի Քեռի Ար-  
շակն աննկուն ռազմավար, Կայծակ Առարեին ու զոյգ Ա-  
ւետիսները գործունեայ, Բրդաշնցի Հաշի Գէորգը պատ-  
րաստակամ մարտիկ, Մոկացի Գրիգորը միշտ իդիթ և  
Զինոր Գրիգորն ուխտեալ ռազմիկ, Գոմսեցի Կորիւնն  
երկրորդ Գայլ Վահան և Մշեցի Սմբատը Մամիկոնեան  
տան արթասիրտ զաւակ:

Մոկացի Աստուրը քաջորդի և Ճամփրամցի յաղթա-  
հասակ Սողօն պարտաճանաշ:

Վարդենիսցի Մուրադը և Արտօնքցի Զնդօն, Ելփա-  
սինչցի Վարդանն ու Սայդօն, Սպաղանքցի Գալէն ու Կար-

ուցի Յակոն, Սասունցի Մօրուք-Կարօն, Ջնիկցի Ղազարն  
ու Բէթարցի Մանուկ և Ախօն, Սասունցի Մուշեղը, Աւ-  
րանցի Արամը և Ալիջանցի Տիգրանը, Բերդակցի Ռոկոնն  
ու Վահանը, Խարաբաշահարցի Մուրագը վիթխարի և  
Կորեցի Կնեազ Թափալցեանը, Առուտամիկադուկցի Նա-  
զօն և Վարդենիսցի Հասրաթն ու Մշեցի Արօն, Խոզլուկցի  
(Խուռա) Արօն և Բերդեցի Արօն յանդուգն և Տիգրանը,  
Կարաքէօփրուեցի Ջաբօն և Մելիքը, Խալիլավուշցի Մօսօն  
և Հարամիկցի Տիգրանը՝ Հայրենիքի ազատութեան անձնէը  
ուազմիկներ և զինւորները:

Թուրէնը (Տէր Մինասեան) յեղափոխական խոհուն զե-  
կավար, Կովկասահայ Գերենիկն հոսանդուն և ուսանող Զա-  
մէնը ժըաջան, Վանեցի Գարմինը ժողովրդավար և հմուտ  
գործիշ, Մարզպետն ուղղամիտ, Սիմոն Զաւարեանը վա-  
ղեմի յեղափոխական և հասարակական մեծանուն գործիշ,  
թ. Յակոր Զաւրեանը՝ տիպար հայի մարմնացում:

Գողթանցի Աւետիսն աննման, Կողբեցի Տիգրանն  
անմօռաց, Կարնեցի Գեղամ Աստուրեանը զազափարի զին-  
ւոր և Վանեցի Վահան Փափազեանը՝ (Կոմո) յեղափոխա-  
կան աշալուրչ և բազմաշխատ գործիշ:

Եւ այս բոլոր յաւերժ անմօռաց անձերի յողնած ու  
վաստակարիկ ճականների բոլորափր և սիրելի անուննե-  
րի շուրջը՝ Հայոց Աշխարհի լերանց մշտագալար ծառերի  
և զափնիների ճիւղերից և հովիտների զիներուկ ծաղիկ-  
ներից, շուշաններից և կարմիր կտկաջներից՝ իրեւ փա-  
ռապսակ՝ հիւսենը անունը պաշտելի և անգուդական  
Հրայրի, որը իւր լուսազարդ ճակատով արձանանում է  
որպէս Տարոն-Տուրուրեանի Հայութեան սիրտը, նրա ուազ-  
մական ոգու մարմնացումը, տիպար մտաւորական դործի-  
շը, մարտնչող ժողովրդի դեկավարը, նա Տարոնի աշխար-  
հի Աւուականն էր, որ ամեն տեղն էր, ամեն շարժման,

գործին, պայքարին՝ հետեւող, մասնակից և ղեկավար։ Նա Հայութեան թշնամիների Դժոխմն էր, որ կը ու բոց էր ժայթքում։ Նրա սիրուր հայածին էր, հոգին հրածին, նա հրացայտ մարդ էր—Հըայր... բովանդակ Հայութեան պաշտելին—Հըայր, Ուրուական, Դժոխմ—«Երեք անուն և մի բնութիւն»։

\* \* \*

Այժմ աւելակ և հայազուրկ է Տարոն-Տուրուբերանը, հօնքուր, հօնքուր արտասւում են Մեղրագետն ու Արածանին։

Նեմրութայ սարսից՝ հազար աղբիւրներ՝ հազար ակներով «Մշոյ Դաշտի վրայ կերթան», վէրան վաժանի մրկած ու ծարաւ սրտի մէջ կերթան...»

Եւ այդ Մեծ Սրբից, հայածին վրէժով, ծնունդ են առնում՝ ողջ-ողջ այրւած, գետերում խեղդւած, խումբնում մորթուտւած, կամ կոփեներում հերոսի մահով քաշաբար ընկած՝ հարիւր հազար հայերի ըմբոստ հոգիներ և ուրւականները, որոնք ազիզ վաթանի ամեն կողմերից, գիշեր ու ցերեկ, մի նոր զարթօնքի, նոր արտալոյսի եւ ազատ կեանի հրաւէր են կարդում աշխարհում ցրւած հայորդիներին։

— «Ելէք, ելէք քաշազունք,  
ելէք, Հայկայ զաւակունք...»

Ելէք, ելէք—«Մոխիրներու վրայ նստէք,  
Աւելակներ շինէք բոյն։

Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,  
Մինչև Հայոց գարուն գայ...»։

## ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԱԻԵՏԻՍԵԱՆ

Ա.

**Մ**շոյ դաշտի հայաբնակ և կարնոր մէկ գիւղն է Զրիկ գիւղը, ուր ԺԹ-ըդ գարու ղեռ սկզբներից, իբրև նահապետական և բազմանդամ գերդաստան, յայտնի էր Բարբացաննեց տունը, որ գիւղին ընծայել էր քահանաներ և տանուտէրեր, Բարբացաննեց գերդաստանը գիւղում յարգւած և սիրւած տներից մէկն էր համարւում։

ԺԹ-ըդ գարու կէսերին, Բարբացաննեց գերդաստանի գլուխն ու պապն էր Տէր Աւետիս քահանայ Բարբացանեանը, որն իւր գիւղի աւագ երէցն էր։

Սա 4 զաւակ է ունենում, մեծը՝ Յովհաննէս, միջնակը՝ Մկրտիչ, իսկ կրտսերը՝ Վարդան և մի աղջիկ Ալմաստանունով։

Վարդանը ծնւել է Զրիկ գիւղում 1860 թւին և մը կրտսել է նոյն գիւղի Տէր Կարապետ քահանայ Տէր Մարգարեանի ձեռքով։

Տէր Աւետիսը մեռնում է 1863 թւին, Ընտանիքի հոգսն ընկնում է Յովհաննէսի վրայ, իսկ Մկրտիչն անցնում է ԿՊՊ Պոլիս և յաջողում է մտնել պետական ծառայութեան մէջ, վերջնականապէս հաստատւելով այնտեղում։

Յովհաննէսը չկարողանալով կառավարել իւր հայրական տնտեսութիւնը, կարճ ժամանակւայ ընթացքում ամեն ինչ վշացնում, շուայլում է և վերջն էլ անտէր թողնելով իւր այրի մօրը, տիրուհի Մարիամին, անցնում է Կովկաս՝ գործ վինտուելու։

Տիրուհի Մարիամը իւր կրտսեր որդու՝ Վարդանի հետ, մեռն է ծայր տատիճան թշւառ վիճակում, Քըղերը Մարիամից գրաւում են այն հոգային կալածները, որոնք սեփականութիւն էին համարւում Բարբացաննեց գերդաստանին՝ Խաշմանուկ գիւղում։

Այսպէս աղքատ և նոյն իսկ օրւայ հացի կարօտ մայրը, իւր զառն աշխատանքով կարողանում է հինգ տարի պահել իւր Վարդանին, մինչև որ 1868-ին նրան տանում է Մշոյ Ս. Առաքելոց վանքը, նպատակ ունենալով որդուն ուսման տալ, այնտեղի գիշերօթիկ դպրոցում։

Վահականները մերժում են ընդունել Վարդանին տանջած և յուրահատ մայրը որդու ձեռքից բռնելով գընում է Ս. Կարապետի վանքը և ներկայանալով Խրիմեան Հայրիկին լաց լինելով առում է։

— Հայրիկ, զուրբան եղնիմ քո ազիզ անուան, թրղթիկ մը զբա տուր զիս, որ զիմ որդին, հա իզա Վարդանը, Ս. Առաքելոց վանքի գիշերօթիկ վարժատան մէջ կարգցուն, թրղ իտա զիմ տղէն ուսում առնի, ես լէ զինք զուրբան կէնիմ Հայոց ազգին։

Խրիմեանը յարգում է թշւառ մօր խնդիրը։ Վարդանն ընդունում է սան Ս. Առաքելոցի գիշերօթիկ դպրոցում, ուր և տարի աշակերտելով բազմավաստակ Յովհաննէս Վարդապետին, աւարտում է յիշեալ զպրոցի ուսման շըրջանը, 1874 թին, 14 տացեկան հասակում։

Տիրուհի Մարիամը, որ մի ուսումնասէր և բարեպաշտ կին է եղել՝ անմիջապէս միջոցներ է ձեռք առնում, որ կարողանայ որդու համար ճանապարհածախս ճարել, որպէսզի նրան ուղարկէ Կ. Պոլիս, ուսումը շարունակելու համար։

Խեղճ մայրը ոչ մի կերպով չկարողանալով իր որդուն ճամբու ծախը ճարել, ստիպւած՝ իւր զարդեղիններն ու նոր շորերը ծախում է և զոյացած գումարը Վարդանին տալով ուղարկում է Կ. Պոլիս։

Երկար և տանջալից ճամբորդութիւնից յետոյ Վարդանը հասնում է Կ. Պոլիս, այն ժամանակ, երբ արդէն իւր Միլտիչ եղբայրը մեռած է լինում։ Մշեցի հայրենա-

կիցների օգնութեամբ նա յաջողում է իւր մհամած եղբօր դրամական պահանջները գանձել և նրա գեղեղմանի վրայ (հւսկիւտարի ազգ, հանգստարանում) մի մարմարեայ մահարձան դնել։

Եղբօր մահը ի շիք է դարձնում Վարդանի յոյսերը։ Նա թողնում սովորելու միտքը և պատրաստում է մեկնել հայրենիրը, երբ այնտեղից նամակ է ստանում, որ իւր մայրը—թշւառ Մարիամը—մեռել է աղքատ և անմիթաբ վիճակում։

Ուստի և Վարդանը Կ. Պոլիս 1874 թւի վերջերին ճանապարհում է դէպի երուսաղէմ և յաջողում է մանել տեղոյն Հայոց Մայրավանքի—Ս. Յակովիտեանց Ժոռանգաւորաց գիշերօթիկ վարժարանը, ուր սովորում է Հայոց պատմութիւն, եկեղեցական պատմութիւն և մասնաւորապէս հայկական ձայնագրութիւնը, կատարելապէս ուսումնասիրելով հայ եկեղեցական եղանակները։

Վարդանը Երուսաղէմում մնում է մօտ հինգ տարի, մինչև 1878 թւի ամբան, երբ Հայկական հարցը Բերլինի վեհաժողովին էր ներկայացւել և զգային ու քաղաքական յուստու հոռանկարները ամեն մի հայի սրտում ոգեսրութեան նոր աղքիւներ էին բացել։ Ամեն մի հայի ձգտումն էր ծառայել հայրենիրի աղքատագրութեան և ժողովրդի դաստիարակութեան գործին։

Այս զգացումներով ոգեսրուած Վարդանը 1878-ի ամբան Երուսաղէմից վերականում է Մշոյ դաշտը և Բերդակ գիւղում բաց է անում մի ծխտկան զպրոց, զեղուկ մանուկներին տալով հայրենի դաստիարակութիւն։

Յաջորդ տարին, 1879 թւին, Վարդանը հրաւիրում է Բասեն, իրեն ուսուցիչ Դալի-Բաբա գիւղի դպրոցին։

Մի տարի ևս այստեղ մնալով, 1880 թւին անցնում

է Բիթլս և կարգում է ուսուցիչ Գոմոց վանքի գիշերօթիկ դպրոցին, Մուղսի Ղարիբջանի օրով.

Այստեղն էլ երկար չի մնում, ուստի և 1881 թւի փետրվարին անցնում է Վան. Այն ժամանակ Վանի առաջնորդն էր Խրիմեան Հայրիկը, որին ներկայանալով Վարդանը, յայտնում է իւր պատրաստակամութիւնը կրթական գործին ծառայելու համար.

Հայրիկի կարգադրութեամբ Վարդանը նոյն թւի մարտի 1-ին նշանակում է Կոտոց Անապատի վանքի գիշերօթիկ դպրոցին Հայոց լեզի և ձայնագրութեան դասատու:

Սակայն Վարդանը Կոտոց Անապատում տիրող խաւրամտութեան զէմ պայքար է մղում և ապա ընդհարւում է միաբանների հետ, որոնց հանդէպ իս դժգոհութիւնը հետևեալ տողերով է արտայայտում.

«Երբ գնացի Վանայ Կոտոց,  
Հիւանդացայ գինոյ հոտոց,  
Կղերը ժողված էին մի խուց.  
Զիաշեր հալին, ատենն էր հունձ,  
Բարի կղերը զիս պատւեցին,  
Դասատւութիւն ինձ յանձնեցին,  
Իրաւունքիս կէս կլլեցին,  
Իրենց մտօք անպարտ մնացին.  
Մազէ լաթով սուրը ձեացան,  
Իրաւունքիս կէսն ուրացան,  
Մակոյկ նստան զծովիալ անցան  
Բոլորովին զԱստած մոոցան.  
Անբախտ Վարդան Տարօնացի,  
Տարօրինակ պանդուխտ մնացի,  
յերուսաղէմ եղածս ատեն,  
Ի կղերացդ զժգոհ մնացի»\*).

\* ) Տես «Խունթ Մշեցու խելացի խոսքեր» Գ. Րոդ տպագրութ. էջ 8—9. Թաւրիկ 1921 թ. Տպարան «Փարս»:

Կոտոց Անապատից հեռանալուց յետոյ, Վարդանը հրաւիրւում է Վարագայ վանիքի Ժառանգաւորաց վարժարանը, իբրև ձայնագրութեան դասատու, 1881 թւի Ապրիլ ամսին:

Բ.

Ի՞նչ էր ներկայացնում ազգային ու հասարակական կեանքը Վանում, 1880-ական թւերին, երբ Վարդանն ապրում էր Վան-Վարագում:

Խրիմեան Հայրիկը 1857 թւին Վարագում հիմել էր «Ժառանգաւորաց Վարժարան»-ը, որ Վասպուրականի հայութեան մտաւոր կենտրոնն էր համարւում, հայրենասիրական և ազատասիրական ձգումների օրբանն ու օջախը՝ Խրիմեանի շնչով դաստիարակւած երիտասարդութիւնը բուռն ոգևորութեամբ ստեղծագործական աշխատանքի էր լծւել:

Հայ երկրի, պատմութեան ու գրականութեան ուսումնասիրութիւնը կենսական սկանանց էր դարձել Վանի երիտասարդութեան համար: Ժառանգաւորաց Վարժարանի սաները, ամենքն էլ, առաւել կամ նւազ չափով, աշխատում էին հրապարակի վրայ երեալ և հասարակական գործերում գործօն մասնակցութիւն ցոյց տալ:

Այս խիստ արդիւնական թւականներին է—1860-1890, որ Վանում ծնունդ առնում և զարգանում է զուտ տեղական և բնաշխարհիկ մի զրականութիւն, որի լաւագոյն ներկայացուցիչներն են՝ Խրիմեան Հայրիկ, Գարեգին Սրուանձտեան, Արակեն Թոխմախեան, Տիգրան Ամբրջանեան, Երեմիա Եպիսոպ, Արխտակէս վրդ. և Սեղրակ Տէր Սարգսեան — Տէվկանց եղբայրները, Ղետնդ վրդ. Փիրզակիմեան, Մանուկ Արտամետցեան, Գրիգորիս Ազուանեան, Հայրապետ Զանիկեան, Գէորգ Շէրենց, Մհորով վրդ. Փափագեան, Ղետնդ քահանայ Ջիրօհան, Մանուէլ Սնանեան,

Միհրգատ եսայեան, Յովհ. Կուլօղեան, Մկրտիչ Աւետիս-  
եան, Եղիշէ Դոնտակշեան, Պօղոս Վրդ. Նախանեան և յլն:

Մայր երկրի հարազատ ծոցում ծնւած, մնւած և  
ապրած այս զաղափարական, Հայրենասէր և ազատատենչ  
երիտասարդութիւնը Հայկական հարցի արծարծումով ո-  
գերւած՝ երազում էր Հայաստանի ազատութիւնը, որի  
համար էլ ոգի ի բոին աշխատում էր Հասարակական  
ասլարէզում:

Վահում իբրարու և տեից հիմնում էին կրթական, ազ-  
գային և հասարակական հիմնարկութիւնները,

Այս եռանդուն շրջանին Մկրտիչ Փոքրթուգալեանը մըտ-  
նում է Վահու, ուր և հիմնում է (1878 թ.) իւր յայտնի  
«Վարժապետանոց»-ը, միաժամանակ զրադարձով յեղափո-  
խական գործունէութեամբ:

Տաճկահայաստանի հայաբնակ նահանգների մէջ, Վաս-  
պուրականի հայութիւնը առաջինն էր, որ այդքան արագ  
և հաստատուն կերպով զարգացել էր (մօտ 30 տարւայ  
ընթացքում. 1860—1890), գրական, կրթական, հասարա-  
կական և յեղափոխական գործունէութեանց ասպարէզ-  
ներում:

Այսպիսի մի շատ հետաքրքիր և կենսունակ միշափայրի  
մէջ գործելու բախտ էր ունեցել ահա Մշեցի Վարդան Տէր  
Աւետիսեանը, որ ներշնչւելով Վահու երիտասարդութեան  
ազգասիրական և Հայրենասիրական զրականութիւնից,  
ինքն էլ փորձում է իւր անձնական զգացումներն արտա-  
յայտել, զուտ հայկական այս շերտ մինուրտում, որտեղ  
Վարդանը գտնում է իւր ցանկացած ազատութիւնը.

«Ազատութիւն քեզ որոնի,

Վասպուրական ես կանգ առի,

... Երբ ալս կընեմ քաղուի հոգիս,

Ազատութեան սէրն ի սրտիս...»:

Ազգային, հասարակական և գրական այս եռանդուն  
կեանքը սակայն խանգարուում է 1885 թի գարնան, երբ  
Տաճկաց կառավարութիւնը նկատելով, որ Վասպուրակա-  
նի հայութեան այդ մտաւոր փերածնունդը և բարոյական  
յառաջադիմութիւնը, կարող են քաղաքական ընդգումնե-  
րի առիթ տալ, ուստի նա սկսում է խիստ հալածանք հանել  
Վահու զեկափար և յեղափոխական տարրերի զէմ։ Նոյն  
թի Ապրիլ ամսին Խրիմեան Հայրիկը Վահուց արսորում  
է Կ. Պոլիս. Մ. Փոքրթուգալեանի դպրոցը փակւում է, ինքը  
երկրից հեռացնում է, բանտարկում են Վահու երիտա-  
սարդութեան մէջ քաղաքականապէս «գտանգաւոր» հա-  
մարւած տնհատները և այլն։

Նկատելով, որ Վահու միմնուրտը մոայլում է, ուստի  
Վարդանը նոյն թի ամրան Վահուց ճանապարհում է գէ-  
պի Մուշ, ուր ներկայանալով Ներսէս Վրդ Խարախանեա-  
նին, յայտնում է իւր պատրաստակամութիւնը, թէ հասա-  
րակական և թէ յեղափոխական ասպարէզներում ծառա-  
յելու համար,

Խարախանեանը Վարդանին մի ստրճանակ տալով  
նէր, ճամբում է Վարդինիսցի Մարգար Վարժապետի մօտ։  
Սա էլ Վարդանին ուղարկում է Մշոյ հայ գիւղերը, ժողովը-  
դի մէջ ազատասիրական և յեղափոխական գաղափարներ  
տարածելու համար։

Մի գիշեր Վարդանը երկու յանգուստն երիտասարդնե-  
րի հետ, որոշում են սպաննել Տաճկանի հայութեան պա-  
տուհաս տիրահոչակ քիւրդ Մուսա բէկին։

Երիտասարդները մտնում են զարանի, բայց բէկը  
փոխանակ փողոցի կողմից զուրս գալու, տան հտից է  
հեռանում և այդպիսով ազատուում է։

Մի քանի ամիս Մշում մնալուց յիտոյ, 1886 թի  
գարնան, Ներսէս Վրդ Խարախանեանը Վարդանին ուղար-

կում է Քղի քաղաքը, իբրև ուսուցիչ տեղւոյն ազգային գպրոցին.

Մինչև 1888 թւի վերջը, Վարդանը թէ Քղի քաղաքի և թէ Հողաս և Խուրէք հայաբնակ գիւղերի ազգային զըպ-ըոցներում ուսուցչական պաշտօններ է վարում, միաժամանակ նաև իբրև յեղափոխական քարոզիչ շրջում է հայ գիւղերում ժողովրդի մէջ ազատութեան գաղափարը վառ պահելու համար.

Սակայն Վարդանը ձգտում էր նորից զնալ Վանը և պաշտօնավարել Վարագայ Ժառանգաւորաց Վարժարա. նում, որտեղ տիրող ազգային—հայկական զաստիարակութիւնն ու ոգին գրաւել էին նրան. Ուստի 1889 թւի գար- նան Քղից ճանապարհում է դէպի Վան-Վարագը և ըն- դունում է Ժառանգաւորաց Վարժարանում ձայնագրու- թեան դասատու:

Վան-Վարագում նորից տիրում էր նոյն ջերմ, ազգա- յին և ազատասիրական մինոլորտը. Վանի գրականութիւնն ու կրթական, ինչպէս նաև յեղափոխական գործունէու- թիւնը նոյն խափով և եռանդավ շարունակում էին:

Վարդանը նորից ներշնչում է այս ջերմ, հարազատ միջավայրից և զրում է իւր յայտնի երգը — «Տարոնացի պանդուխտի երգը», որ Վանում մեծ ժողովրդականութիւն է գտնում և տասնեակ տարիներ շարունակ երգում էր.

«Մայիս ամսուն, զու, գեղիւոիկ,

Միանում ես Մշոյ լերինք,

Կորուցեր եմ քաղցը հայրենիք

Կուլամ, կողբամ, չասես հերիք,

Լեառն Մշոյ է նման Մասիս,

Մայրիկս կուլայ, կոշում է զիս,

Կասէ ինձի եկուր, առ իս,

Բաւ է, Վարդանս, դուն թափառիս».

Պանդուխտ եմ ես օտարութեան,  
Ատեն չունիմ, որ առ քեզ գամ,  
Ցաւերս շատ են, վիշտս յարաժամ,  
Գուցէ սոցա եմ ես արժան:  
Ես միայն եմ թշւառ, ահտէր,  
2իր կարեկից ըլլայ ինձ տէր,  
Թափառում եմ օտար, աւեր,  
Բաւ է կրեմ ես սա ցաւեր».

Անբախտ եմ ես Տարոնացի,  
Շատ ժամանակ պանդուխտ մնացի,  
Մշոյ երկրէն կարօտ մնացի,  
Հայրենիքս կարօտ մնացի:  
Ծնած տեղս Զրիկ—Մուշ է,  
Ինձ ասում են թէ ապուշ է,  
Լալ և կոծում սգոյ գոյժ է,  
Մշոյ երկիր խուժազուժ է,  
Իւր հոդն ու ջուր շատ անուշ է».\*)

Վարագում պաշտօնավարելու ժամանակ, Վարդանն որոշում է զնալ էջմիածնի ձեմարանը, կանոնաւոր ուսում ստանալու համար:

Ուստի և 1890 թւի Ապրիլին խնդրում է Վարագայ Ժառանգաւորացի տեսուչ Մեսրոպ վրդ. Մոկացեանից, որ իրեն իւր պաշտօնից ազատ արձակէ. Թէև տեսուչը շատ է համոզում և խնդրում, որ Վարդանը մնայ և շարունակէ իւր պաշտօնը, բայց նա չի համաձայնուում. ուստի և նոյն թւի Ապրիլի վեցերին, Վարագից ճանապարհում է դէպի Մուշ, Վարագայ Ժառանգաւորաց Վարժարանի տես- չից ստանալով հետևեալ վկայագիրը:

«Մշոյ Զրիկ զիւղացի Տէր-Աւետիսեան պարոն Վար- դան իւր ձայնագրական հմտութիւն Վարագայ վա-

\* ) Տես «Խենթ Մշուցու խելացի խօսքեր» Գ. ապագը. էջ՝ 6—7։

նուցս ժառանգաւոր աշակերտաց ինն ամիս այլ և  
այլ եկեղեցական երգեցողութիւններ դասախոսելով,  
այժմ իւր ստիպողական զործոց համար վանքէս կը  
մեկնի իւր հայրենիքն երթալու.

«Թէս մեզ տակաւին շատ պէտք էր, որ ի վանս  
մնար, բայց ստիպեալ իւր թախանձանքէն՝ հրաման  
տւինք երթալ։ Ինք կրօնասէր և առարինի անձնաւո-  
րութիւն մը լինելով. 'ի սէր իւր կուտամ սոյն վկա-  
յագիբս 'ի ձեռին։»

Տեսուչ Վարդապայ՝  
Մեսրովակ վրդ. Մոկացեան

1890 Սպրիլ 9  
'ի Վարդապ

Կնիք	Մեսրով վրդ. Մոկացեան 1884
------	---------------------------------

Ք.

Մուշ համելուց յետոյ, Վարդանը էջմիածնի ձեմա-  
րանում սովորելու իւր ցանկութիւնը յայտնում է Տարոնի  
առաջնորդ ներսէս վրդ. Խարախանեանին, որը խրախու-  
սում է նրան, խորհուրդ տալով անմիջապէս ճանապարհ-  
ել էջմիածնին.

Խարախանեանը Վարդանին տալիս է հետեւալ վկա-  
յականը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ  
ՀԱՅՈՑ

Մուշ, 29 Յունիս 1890

Ի ՏԱՐՈՆ Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

«Բնիկ Տարօնոյ վիճակիս Մշոյ Դաշտի Զրիկ գիւղի բը-  
նակիչ պարոն Վարդան Տ. Աւետիսեան որ 'ի դաշտն Մշոյ,  
'ի Կեղի և յայլ տեղիս նախապատրաստական վարժարա-  
նաց մէջ ուսուցչութեան պաշտօն վարած և իւր համեստ,  
պարկեշտ և աշխատասէր վարուք զոհ կացուցած է դրպ-  
րոցական տեսչութիւններն, վաշակերտու և ծնողս։

Իւր ուսումն ու կըթութիւնն ստացած է 'ի Ժառան-  
գաւորաց Վարժարանի Սրբոց Յակովիանց որ 'ի Ս. Ե-  
րուսաղէմ և մասնաւորապէս ուշադրութիւն ու չափ նւի-  
րած է Զայնազրութեան և զայն կատարելագործելու զերմ  
փափագն կը տածէ, եթէ յաջողութիւն ունենայ յԱրարատ-  
եան Մայր-Աթոռն Սրբոյ Էջմիածնի ընդունուիլ.

«Պ. Վարդան մեր խնամոց և ձեռաց ներքի ևս գոր-  
ծածուած լինելով կը վկայեմք որ աշխատասէր, խոհեմ,  
համեստ, վարուք բարուք առարինի, պարկեշտ և հաւա-  
տարիմ երիտասարդ մէ և ամենայն փոտահութեամբ կը  
յանձնաբարեմք զինքն մեր պատ. Ազգայնոց. Ուստի և  
սոյն վկայական գրութիւնս տուար ի ձեսն յիշեալ պ.  
Վարդանալ։»

Առաջնորդաւոն Հայոց Ի Մուշ	Կնիք
---------------------------------	------

Ընդհ. Վանահայր—Առաջնորդ Ս. Կարապետի և Մշոյ՝ Ներսէս Վ. Վարդանալ	Ընդհ. Վանահայր—Առաջնորդ Ս. Կարապետի և Մշոյ՝ Ներսէս Վ. Վարդանալ
--	--

Վարդանը 1890 թւի Յուլիսին Մշից ճանապարհում  
է Էջմիածնին և ներկայանալով Մակար կաթուղիկոսին,  
յայտնում է իւր ցանկութիւնը՝ ձեմարանում սովորելու  
համար. Կաթողիկոսը յանձնաբարում է ձեմարանի վար-  
չութեան բնիք Վարդանի ուսման վիճակը և նրան ընդունել  
ձեմարան, բայց վարչութիւնը նկատելով, որ Վարդանը  
տարիքով մեծ է (30 տարեկան) ուստի և մերժում է  
նրա խնդիրը.

Նոյն թւի Մեպտեմբերին, Վարդանը էջմիածնի կող-  
մից, նշանակում է ուսուցիչ, Աշտարակին մօտիկ Եղվարդ  
գիւղի ծխական գպրոցում։

Ցաշորդ տարին (1891 թ.) Վարդանն անցնում է Ատըր-  
պատական, հաստատւելով Թաւրիզ քաղաքից մօտ 50  
վերստ հեռու Ալշամուլք հայաբնակ գիւղում, ուր տուածին

առթիւ իսկ հիմում է գիւղական դպրոց, միաժամանակ՝ նորոգելով Մուժամբար հայարնակ գիւղի դպրոցի խարխուլ շինքը։

Վարդանն այս երկու գիւղերում, ոգի ի բոքն աշխատում է, ժողովրդի մէջ վառ պահել ազգային գաղափարները և ուսման անհրաժեշտութիւնը։

Ալշամուլքի գիւղացիները, մի տարւայ ընթացրում, ճանաշելով Վարդանի ազգասիրական ողին և նրա պարզ ու դեմոկրատիկ բնաւորութիւնը, մի համախօսական դրութեամբ դիմում են Ստրպատականի Հայոց այն ժամանակաւայ ազգեցիկ առաջնորդ Մտեփաննոս Եպիս. Միիթթարեանին, խնդրելով, որ Վարդանին ձեռնադրէ քահանայ՝ Ալշամուլքի համար։

Թեմական Առաջնորդը յարգում է ժողովրդի դիմումը և 1892 թւի Մարտի 22-ին, Թաւրիզի Հայոց Յերդաթաղի Ս. Աստւածածին եկեղեցում Վարդանին ձեռնադրում է քահանայ։ Զեռնադրութեան ժամանակ Ստեփաննոս եպիսկոպոսը քարոզ է խօսում, ի միջի այլոց ասելով հետեւալը.

— Նորընծայի անունը Տէր Ղեոնդ եմ կնքում, որ նա մեր պատմական Ղեոնդ երէցի նման լինի կրօնասէր և ժողովրդանուէր։

Տէր Ղեոնդ բահանայ Տէր Աւետիսեանը մինչև 1894 թւի Ապրիլ ամիսը հովում է Ալշամուլքի հայութեան և այնտեղից հեռանում է հետեւալ պատճառով։

Նոյն թւի Զատկի թաթախման երեկոյեան, երբ Տէր Ղեոնդը պատարագում էր Ալշամուլքի եկեղեցում, յանկարծ լուր են բերում նրան, թէ պարսիկները գիւղից դուրս ձերբակալել են Սիրիրից փախած մի հայ յեղափոխականի, որին ուզում են սպաններ։ Տէր Ղեոնդը իսկոյն թողնում է պատարագը և վաղելով դէպքի վայրը մահւանից աղատում է հայ յեղափոխականին։

Ստրպատականի Հայոց Թեմական առաջնորդը՝ այնքան խիստ կրօնական Սուրբիաս Եպիս. Պարզեանցը՝ Տէր Ղեոնդի յիշեալ արարքը հակակղերական մի քայլ, համարելով, իսկոյն կարգադրում է, որ նա հեռանայ Ալշամուլքից, հակառակ ժողովրդի ցանկութեան։

Տէր Ղեոնդը գալիս է Թաւրիզ. բոլոր միջնորդութիւնները գուր են անցնում Սուրբիաս Եպիս.-ի որոշումը փոխել տալու համար. Ուստի և նա վճռում է Ատրպատականից հեռանալ,

Թաւրիզի Լիլաւայի և Յերդաթաղի Հայոց Թաղական Խորհրդի անդամները՝ ծատուր խան Սէթ-խանեան, Մ. Նազարբէկիան, Ածար. Փանուէլիան, Տ. Դալֆայիան, Զ. Նազարբէկիան, Սնդրէ Կուլմասեան և Հ. Աւագեան—1894 թւի յունիսի 24-ին նրան տալիս են մի համակրական գրութիւն, գնահատելով նրա «անձնանուէր գործունէութիւնը» աւելացնելով նաև հետեւալ տողերը.

«Նա, վերոյիշեալ քահանայն, (Տէր Ղեոնդը) աշխարհական ժամանակ իր քրտնաթոր ջանիւր և հանգանակութեամբ կառուցեց երկու գպրատուներ, մօտ Դավրէժ քաղաքի Մուժամբար և Ալշամուլք հայաբնակ գիւղօքէց մէջ։

«Եւ արդ, նա ստիպեալ անբացատրելի հանգամանաց տալով իւր վերջին անհրաժեշտ ողջոյնը մերայնոց՝ մեկնում է մեզնից, որին և ահա յանձնարարում ենք մեր համազգայնոց՝ որոց անկն է։

Թաւրիզից հեռանալով զնում է Հին-Նախիջեան, ուր և նշանակում է Եարմջա գիւղի ծխատէրը, 1894 ի Հոկտեմբերի 11-ին։

Յաջորդ տարին—1895 թ. Սուրբիաս Եպիս.-ը նկատելով, որ անտեղի կերպով է հակածել Տէր Ղեոնդին, ուստի նրան կանչում է Թաւրիզ, նշանակելով Լիլաւայի Ս. Սարգիս եկեղեցոյ ծխատէր քահանայ։

Արդարիլի փոքրաթիւ հայ գաղութը 1896 թւին Տէր Ղեռնդին հրաւիրում է, իրք հոգեսոր հովիւ, մինչև որ 1898 թւի Ապրիլին, Թաւրիզի Լիլաւա թաղի հայերը մի համախօսականով դիմում ին Ստրպատականի Հայոց Առաջն. տեղապահ Յովսէփի վրդ. Սարանհանին, խնդրելով, որ Տէր Ղեռնդին հրաւիրէ Թաւրիզ, իրք Լիլաւայի Ս. Սարգիս եկեղեցոյ ծխատէր քահանայ:

Յովսէփի վրդ. Սարանհանը 1898 թւի Ապրիլի 10-ին Տէր Ղեռնդին հիտեսալն է զրում.

«Քաղաքիս Լիլաւա թաղի ժողովուրդը հանրագիր խնդրագրով ցանկացած է կարգել զշեղ նոյն թաղի Ս. Սարգիս եկեղեցոյ ծխատէր քահանայ և մենք այսու կը փութամբ կատարումն տալ ժողովրդեան ցանկութեան, հաստատելով զշեղ ի պաշտաման ծխական հովուարարութիւն նոյն Ս. եկեղեցոյ»:

Սահակ Արքեպ. Այվատեանը 1898 թւի վերջերին նըշանակում է Ատրպատականի Հայոց Թեմ. Առաջնորդ. Սա ևս զանազան խնդիրներով հալածում է Տէր Ղեռնդին. Նըշման հալածանքներ նրա դէմ յարուցանում է նաև Մհարով վրդ. Մաքսուղիանը:

Նրա դէմ յարուցւած այդ անձնական և անմիտ հալածանքների պատճառը Թիմական առաջնորդներն են եղել, որոնք չեն հանդուրժած Տէր Ղեռնդի շիտակ, համարձակ և ուղղամիտ բնաւորութեան, նրա ճակատ առ ճակատ արտասանած յանդիմանական խօսքերին՝ ուղղած Սահակ Արքեպ. Այվատեանի անհոգ պաշտօնավարութեան և Մհարով վրդ. Մաքսուղիանի անտակտ գործերի դէմ: Թիմական առաջնորդների այդ տգեղ արարքներին միշտ էլ դէմ է եղել Թաւրիզի հայ ժողովուրդը, որ մի քանի անգամ հանրագրութիւններով պաշտպանել է Տէր Ղեռնդին:

Այդ հալածանքներից ձանձրացած, բայց միշտ ան-

նկուն, Տէր Ղեռնդը 1907 թւի Մհարումբերին Թաւրիզից ճանապարհում է դէպի էջմիածին, ձեռքին ունենալով Ատրպատականի Հայոց Թեմ. Առաջնորդարանի վկայագիրը (№ 48), որի մէջ աւած է.

«Ղեռնդ քահանայ Տէր Աւետիսեան բազմաշխատ և բարեկրօն պաշտօնեայ Հայ Ս. Եկեղեցւոյ... կայ մեկնիլ ի քաղաքէս (Թաւրիզ) հաճութեամբ սրտի իւրոյ, հակառակ խնդրագին ստիպմանց Թիմական Խորհրդոյ նահանգիս և աղերսագին խնդրանաց հանուը ժողովրդեան բարպիս...»:

Հասնելով էջմիածին, Տէր Ղեռնդը ներկայանում է Խրիմեան Հայրիկին, որը նրան մի Հայրապետական Կոնդակով (№ 1436) նշանակում է Բուլգարիայի Շումլա քաղաքի հայ գաղութի հոգեսոր հովիւ, 1907 թւի Հոկտ. 10-ին:

Ցիշեալ կոնդակում Խրիմեան Հայրիկը Տէր Ղեռնդի մասին Շումլա քաղաքի հայոց Թաղական Խորհրդին հետեւալ տողերն է զրում.

«...Առաքեմք զՏ. Ղեռնդ քահանայն Տ. Աւետիսեան ի հովութիւն Զեր. Արժանապատիւ հայրն այն է ծննդեամբ ի Զըիկ գեղջէ գաւառին Մշոյ, ուսեալ յերուաղէմ ի Ս. Յակոբեանց վանս, ցուցանելով մասնաւորապէս զփոյթ յուսումնասիրութեան եկեղեցական ձանազրութեան. վարեալ է և զպաշտօն ուսուցչութեան ձանազրութեան ի Ժառանգաւորաց գպրոցին Վարագայ վանուց. Հուսկ յետոյ եկեղել ի քաղաքն Դավիթէծ ձեռնազրեալ է քահանայ ձեռամբ Տ. Յտեփանոս Եպիսկոպոսի Մխիթարեան և յընթացս չորեքտասան ամաց վարեալ է զպաշտօն հովութեան ի գիւղօբայս և ի մայրաքաղաքին Ատրպատականի»:

Այս կոնդակի ստորև Խրիմեան Հայրիկը զողոցուն ձեռքով հազիւ է ստորագրել. «Մ. Կ. Ա.մ. Հայոց» (Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց), որովհետեւ նա այդ ժա-

մանակ (1907 թ. Հոկտ.) իր կեանքի վերջին օրերն էր ապրում և յիշեալ կոնդակն ստորագրելուց 19 օր յետոյ յաւիտենապէս փակում էր իւր աչքերը.

Տէր Ղեռնդն էջմիածնից Բաթում—Օդեսա գծով հասնում է Զումլա բաղաքը, ուր և մնում է մինչև 1908 թւի վերջիրին, երբ հոչակւած էր Օսմ. Սահմանադրութիւնը, նա ընտանիքով գալիս է Կ. Պոլիս, որ այնտեղից էլ գնաիր հայրենիքը—Մուշ:

Կ. Պոլսում իրքե ուսուցիչ պաշտօնավարում է Դադրգիւղի Արամեան դպրոցում, միաժամանակ հովելով Կուրու—2էշմէ և այլ թաղերում բնակւող Անատոլիի հայ գաղթականներին.

1909 թւի Մարտի 31-ից սկսում է Կիլիկիոյ հայկական մեծ կոտորածը, որին զոհ են գնում աւելի քան 20,000 հայեր.

Թիւրքիոյ Հայոց Պատրիարքարանը Կիլիկիոյ արկածիալ Հայութեան նիւթական և բարոյական մեծ օժանդակութիւն է ցոյց տալիս: Այնտեղ ուղարկում է յատուկ պատրիակութիւն, հովեռական գործիչներ և այլն:

Նոյն թւի Յուլիսի 8-ին Տէր Ղեռնդը Թիւրքիոյ Հայոց Պատրիարք Եղիշէ Արքեպ. Դուրեանից ստանում է հետեալ նամակը.

ՊՍՏՐԻԱՐՔՈՒԱՆ ՀԱՅՈՑ

Կոստանդնուպոլիս

ԽԱՌԻՆ ԺՈՂՈՎ

Ազգ. Կեդրոնական Վարչութեան

Համար 188

8 Յուլիս 1909

Արժանաւուրեն

Տէր Ղեռնդ բահանայ

Տէր Աւետիսեան

Կ. Պոլիս

«Կիլիկիոյ մէջ տեղի ունեցած ցաւալի անցրերուն հետեանօք Ատանայի և ի մասնաւորի ձէպէլի—Պէրէքէթ գաւառակին զանազան կողմերը եկեղեցականաց պակասութեան պատճառաւ, տեղւայն արկածեալ մեր սգաւոք ժո-

դովուրդն անհովիւ և անխնամ մասցած լինելով, Ազգային Կեղրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ որոշմամբ արժան դատաւած է վարդապետ մը և հինգ քահանաներ ուղարկել այն կողմերն, ժողովրդեան հոգեոր պէտքերը մատակարաբելու և միանգամայն Պատրիարքարանիս սկատվիրակներուն հրահանգաց համաձայն հոգ տանելու անոնց վերաբերեալ գործոց կարգադրութեան համար:

«Զեր սիրելութիւնն ես մին լինելով այս պաշտօնին լարմար գատւած եկեղեցականներէն, աներկմիտ ենք, որ արժանապէս պիտի վարէր այս պաշտօնը ցնոր տնօրինութիւնն և միխթարէր տառապեալ ժողովուրդը:

«Հետևաբար կհրաւիրենք զշեղ որ պատրաստիք օր առաջ ուղեռելու Ատանա, և կծանուցանենք նաև որ Զեր ուղեռութեան ծախուց համար տասն լիրայ և ապրուստի համար ալ ամսական 5 լիրայի թոշակ սահմանած է, զոր պիտի ստանաք Պատրիարքարանի նպաստից յանձնաժողովոյ Ծնդուկէն, որու ևս այս մտօր կարենոր հրահանգ տըրւած է. իսկ ձեր ուղեռութեան ծախրն ստանալու համար կը յանձնարաբենը ներկայանալ մեղ»:

Մնամք Աղօժմարար Պատրիարք Կ. Պոլսոյ՝  
Եղիշէ Արքեպ. Դուրեան \*

Այս նամակը ստանալուց յետոյ, Տէր Ղեռնդը պատրաստում է մնկնել Կիլիկիա, երբ Մատթէոս Արքեպ. Իզմիրիեանն ընտրում է (1909 թ.) Ամինայն Հայոց Կաթողիկոս, որին ներկայանալով (Կ. Պոլսում) Տէր Ղեռնդը, պատմում է այն բոլոր նեղութիւնների և հալածանիքների մասին, որոնք յարուցել էին իր դէմ Ատրպատականի Հայոց Թեմ. առաջնորդները:

Իզմիրիեանը մանրամասնօրէն քննում է այդ խնդիրները և գտնում է, որ Տէր Ղեռնդի դէմ յարուցւած հալա-

\*) Այժմ Պատրիարք Ս. Երևանդէմի:

ծանքները բոլորն էլ անտեղի են եղել և արդիւնք այս ու այն առաջնորդի անձնական տվեղ հաշիւների, մի հանգամանք, որ միշտ էլ գոյութիւն է ունեցել հայ հոգեորականութեան կիանքում։

Ուստի նորմնտիր Կաթուղիկոսը յատուկ գրութեամբ յանձնարարում է Ատրպատականի Հայոց Թեմ. Առաջնորդ Կարապետ Եպիսոպ. Տէր Մկրտչեանին, որ Տէր Ղեոնիդին ընդունէ իւր թեմում. Այդպէս էլ լինում է։

1910 թւից սկսած Տէր Ղեոնին իւր բնակութիւնը հաստատում է Թաւրիզում, իրեն ծխառէր քահանայ, Լիւաւայի Ս. Սարգիս եկեղեցոյ։

### Դ.

Տարիների ընթացքում, Տէր Ղեոնին աշխատել է, իւր ստացած զասսիարակութեան շտփով, օգտակար լինել նաև հայ գրականութեան, բայց դժբախտաբար նրա չանքերը գրեթէ ապարդիւն են անցել։

Եթէ նա կանոնաւոր և մի քիչ աւելի աշխարհիկ կը թութիւն ստացած լինէր, հաւանաբար պիտի կարողանար մի քանի կտոր գրական երկեր արտադրել, որովհետեւ, ըստ երեսյթին, նա ոչ միայն անհուն սէր և ցանկութիւն է ունեցել գէպի գրականութիւնը, այլև գրելու, արտադրելու մի փոքրիկ շնորհք, որը գուցէ զարգանար նրա մէջ, եթէ մշակելու համապատասխան հող ունենար։

Նա լոյս է ընծայել «Խենք Մշեցու խելացի խօսքեր» անունով մի գիրք, երեք տպագրութեամբ\*).

\*.) Ղեոնի բահանայ Տէր Աւետիսեան. «Խենք Մշեցու - խելացի խօսքեր», Կ. Պոլիս 1909. էջ՝ 40 (Փաքրադիր)։

Խոյնը՝ Բ. տպագրութիւն. Թաւրիզ, 1913. Տպարան «Փարոս», էջ՝ 104 (Փաքրադիր)։

Խոյնը՝ Գ. տպագրութիւն. «Բարեփոխած և ճոխացըած», Թաւրիզ, 1921. տպարան «Փարոս». էջ՝ 160 (միջակ)։

Այս գրքի մէջ Տէր Ղեոնիը զետեղել է բազմաթիւ ու տանաւոր գրւածներ, որոնք արտայատում են նրա կրօնական, բարոյական, խրատական, ազգային, հասարակական, յիղափոխական և այլն զգացումները, շատ հասարակ և միամիտ կիրապով։ Այդ ոտանաւորները գրական տեսակտից որեէ արժէր չեն ներկայացնում, մանաւանդ որ լիգական և քերականական խորթութիւններով լի են։

Հեղինակը իւր գրքում առելի քան տասնեակ ոտանաւոր—ձօներ է նւիրել այնպիսի մարդկանց, որոնք հասարակական տեսակէտից, որեէ արժէր չեն ներկայացնում։

«Խենք Մշեցու խելացի խօսքեր» գրքի Դ., տպագըրութեան մէջ, հեղինակը մօտ 140 կտոր ոտանաւոր գրքածներով, շօշափում է մարդկանց առօրեայ կեանքի բազմատեսակ երեսյթներ, իւրայատուկ ոճերով և զարձածքներով։ Այդ գիրքը մի տարօրինակ և բազմագոյն հաւաքարան է, աւելի ճիշտ մի խառնարան, ուր ամեն ինչ անկանոն կիրապով երեսում է։ Այդ խառնարանում գտնւած նիւթերի ընթերցումը յաճախ զանազան խորհրդածութեանց տեղի է տալիս. գւարճացնում է ընթերցողին, որի եզրակացութիւնն, ըստ իս, հետեւեալն է լինում։

Տէր Ղեոնիը ժողովրդական մի պարզ և անպաճոյն հեղինակ է, որն իւր կրթութիւնը ստացել է հոգեոր ասպարէզում, դառնալով ազգային, զուտ հայկական հոգով մնւած և հայ եկեղեցուն նւիրւած մի շափազանց կրօնասէր և խստապահանջ քահանայ, որն անհուն սիրով սիրել է իւր եկեղեցին, ազգն ու հայրենիքը, գովել է նրան նըւիրւած զաւակներին, բողոքել է այն հայ հոգեորականների պէմ, որոնք իրենց կոչման արժանի չեն եղել, պաշտպան է կանգնում հալածւածներին, զուրգուրանքով է խօսում ծաղկի, թոշունի և բնութեան գեղեցկութիւնների մասին, հաճելի լիզով նկարագրում է ժողովրդական զա-

Նազան կենցաղական երեսյթները և այլն:

Ժողովրդական անզարդ բառերով զբւած «Տանուտէր» և խեղճ ճնճղիկ » ոտանաւորը մի սիրուն և հաճելի նիւթ է մանուկների համար.

— ձիւ, ճիւ, ճիւ, ճիւ դու ճնճղիկ,

Ո՞վ է փետտեր զքո փետուրիկ,

Թոիր եկուր մեր կտուրիկ,

Քեզի կը տամ մի քիչ կտիկ,

Պաղ, պաղ, պաղ, պաղ անուշ ջրիկ.

— Թեերս փետտնց մի շար մանկիկ,

Ընկած մացի պատի տակիկ.

Ոչ ջուր ունիմ և ոչ կտիկ,

Դժա ինձի եկ դու մօտիկ,

Ես ամենից իմ խօրօտիկ» (Էջ՝ 19).

Հեղինակը շատ հասարակ և պարզ կերպով է նկարագրում այն ըոպէն, երբ ինքը մօտեցել է Խրիմեան Հայրիկին, էջմիածնում, 1905 թւին,

«... Յետոյ նայուածք դարձուց ինձ վրայ, առանց վրդովելու ասաց.

« — Ելի եկար այստեղ, ծուռ Մշեցի, իսկնթ տղայ,

«Պատասխանելով տսացի — Հայրիկ ջան, ինձ հալածող եղաւ քահանայ, վարդապետ ու աղա», (Էջ՝ 124).

Տէր Ղեոնդը զրելու, արտադրելու շատ մեծ սէր և ցանկութիւն է ունեցել, շատ բանի մասին է կամեցել զըրել, բայց իւր բոլոր զգացածները իսկութեամբ շի կարողացել արտայայտել, որովհետեւ իւր զարգացման շրջանակը շատ սահմանափակ է եղել. Իւր զրելու և արտայայտելու ձեռք նա մօտենում է միջնադարեան հայ տաղերգուներին և սիրել է նրանց նման իւր անունն ու ծննդավայրը յիշել ոտանաւորների վերջերում».

«Հեղինակ իմ ես Պատրիկ կամ Մօրիկ,

Տարօնացի եմ վորքրիկ Անդրանիկ»:

«... ծնած տեղս Զըրիկ Մուշ է»:

«... Անբախտ Վարդան Տարօնացի», ևայն:

Հեղինակն ինքն իսկ զգացել է, որ իւր ոտանաւորները հայ գրականութեան մէջ առանձին տեղ չպիտի զբաւեն, ուստի և միջնադարեան հեղինակների համեստութեամբ ասում է.

«Տգեղ գրչիս փորքիկ է տառ» (Էջ՝ 3), այսինքն ուզում է ասել, որ իւր համեստ զրչի արտադրութիւնները շատ փորքիկ բաներ են. և կամ»

«Երդ շատ բութ է իմ խեղճ զրիչ»: (Էջ՝ 10):

Այս անկեղծ և պարզ խոստովանութիւնը մենք ես ընդունում ենք իբրև ճշմարտութիւն, բայց աւելորդ չենք համարում յիշել, որ Տէր Ղեոնդի զրած ոտանաւորները մի համեստ տեղ են զրաւում հայ ժողովրդական բանահիւսութեան մէջ».

Երանի թէ իւրաքանչիւր հայ ժողովրդական անպանոյն հեղինակը կարողանար իւր ներքին ապրումներն ու շրջապատի առօրեայ կեանքը զիր առնել և մամուլին յանձնել, զարձնելով զայն հասարակութեան սեփականութիւն, ինչպէս այդ արել է Տէր Ղեոնդը:

Երեք տպագրութեամբ լոյս տեսած «Խենթ Մշեցու խելացի խօսքեր» զրքից զատ, Տէր Ղեոնդը թողել է նաև ձեռագիր աշխատութիւններ, որոնց մէջ յիշատակութեան արժանի են՝

1) «Տարեց Զայնական Երաժշութեան». — Մօտ 90 մեծագիր երեսներից կազմւած մի աշխատանք է սա, որը մանրամասն կերպով ուսուցանում է հայկական ձայնագրութիւնը, որին հեղինակը բաւական հմուտ էր. Բազմաթիւ վարժութիւններով, ձայնագրուած շարականների եղանակներով, տաճկական նոտաների (ձայնանիշ) համեմատական

օրինակներով և պարզ ու հասկանալի կերպով. Տէր Ղետնդը կազմել է իւր այս աշխատանքը, որն ամենայն դէպս, բաւական արժէքաւոր մի գործ է, հայկական ձայնագրութիւնը սովորելու և ուսումնասիրելու համար:

2) «Դալի Բաբայի կեանքի արկածներ».— Այս ձեռագրի յառաջաբանում Տէր Ղետնդը գրում է.

«Մշոյ Խորոնդ գիւղ, որ Մովսէս Խորենացւոյ ծննդավայրն էր, այդ գիւղում 1860 թւականին տանուտէրն էր Սբրահամ անուամբ մի տէրտէրի տղայ, որի խիստ ճարպիկութեան առթիւ «Դալի Բաբա» էին անւանում բիւրդերը:

«Ահաւասիկ այս զբքոյկում (ձեռագիր) արձանագրում եմ նրա գլխին եկած անցուղարձ, որ անւանում է «Կեանքի արկած»։

Բաւական հաճելի կերպով Տէր Ղետնդը գրել է Դալի Բաբայի կեանքից 22 արկածներ, որոնց սկիզբը սկսում է այս տողերով.

«Խենթ ու խելառ Մշեցի, մի յիշեսցի. Կթէ յիշեսցի վէմ շարժեսցի...»։

Դալի Բաբայի այս արկածները շատ հետաքրքրաշարժ են, զարդարւած յաճախ վիպական և չափազանց խիտ գոյներով։

Տէր Ղետնդն ունեցել է նաև զանազան գրութիւններ, որոնց մէջ եղել են Մշոյ աշխարհում, Ժ. Թ.-դ դարում կատարւած պատմական անցքերի և անձերի մասին հետաքրքիր տեղեկութիւններ, որոնք ժամանակի ընթացքում կորել են։

b.

Տէր Ղետնդը բնաւորութեամբ համարձակ, ուղղախօս և պարզասիրտ մի հայ մարդ էր, բառի լայն առումով։ Մտերիմ և բարի էր իւր յարաբերութիւնների մէջ, հաճոյախօս և պատրաստաբան, աշխատ և աշխատասէր։

Ղնդունակ էր հաճելի բառախաղեր սարքել, ներդաշնակ վանկույանգերով և գւարճացնել իւր խօսակցին։

Ժողովրդի ամեն խաւերին մատչելի էր, ամենքին սըրտակից և բարեկամ։ Այս ու այն կրւսակցութեան չէր յարել։ Կրօնական, բարոյական և ազգային ու հայրենասիրական զգացումներն ու յօրդորներն էին նրա խօսակցութեանց և քարոզների նիւթը։ Թէև շուտ էր բարկանում, բայց քինախնդիր չէր։ Զնայած որ միշտ էլ 10 անձից բաղկացած ընտանիքի ծանը հոգսերով բեռնաւորւած էր, բայց այդուամենայնիւ հիւրասէր էր, առատաձեռն և աղքատների վերաբերմամբ հոգածու և խնամատաբ մի բարի հայը։

Հայոց քաղաքական ազատութեան և անկախ հայրենիքի գաղափարը նրան շատ են ոգեորել և այդ ոգեորութիւնը տեսաց մինչև իր մահը։

Այս բոլորից յետոյ, նա իւր բահանայական կոչման միանգամայն արժանի մարդ էր և իբրև այդպիսին սիրում էր ժողովրդից։

Ամենայն Հայոց Կաթուղիկոս Տ. Տ. Գէորգ Ե.-ը զը, 1914 թւի Հոկտ. 1-ին Տէր Ղետնդին վարձատրել է լանջախաչով, Հայրապետական յատուկ կոնդակով (թ. 1445) որից մէջբերում ենք հետևեալ տողերը.

«... Արժանապատիւ Տ. Ղետնդ քահանայի Տէր Աւետիսեան Թաւրիկ քաղաքի, հարազատ որդւոյ Մայը Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

«Ընկալաք զյայտարար— Դրութիւն Գերապատիւ Առաջնորդի<sup>\*)</sup> Թեմին Հայոց Ատրապատականի ի 29 անցելոյ Սեպտեմբերի, որով խնդրէ վարձատրել զշեզ վասն 25-ամեայ բարւոք ծառայութեան ի Տաճարի Տեառն։

«Արդ՝ յարգելով զմիջնորդութիւն Գերապատիւ Առաջ-

<sup>\*)</sup> Գեր. Տէր Ներուէս Ալքեու. Մելլք. Թանգեան։

նորդին, այսու Հայրապետական Կոնգակով Մերով շնորհեմք զՁեզ իրաւունս կրելոյ ի կուրծսդ զբահանայական լանջախաչ:

«Հաւատամք, եթէ վարձատրութիւնս այս լիցի Զեզ ի խրախոյս կալ և մալ հանապազ հաւատաբմութեամբ առ Մայր Աթոռս Ս. էջմիածնի և ծառայել ամենայն արիաջանութեամբ յօգուտ ժողովրդեան, ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ»:

Իսկ յաջորդ տարին (1915 թ.) Ատրպատականի Հայոց այժմւայ Թեմական Առաջնորդ Գեր. Տէր Ներսէս Արքակ. Մելիք-Թանգեանը Տէր Ղեոնդին վարձատրումէ «Խառա Փիլոն»-ով, ուղղելով նրան հետեւալ զրութիւնը.

Ա.Ա.ՁՆՈՐԴՈՒԹՅԻՆ ՀԱՅՈՑ

Թեմին Առաջապահնի

№ 298

Թաւրիկ, 5 Հոկտ. 1915

Արժանապատիւ

Տէր Ղեւոնդ

«Զեր անշահասէր զործունէութեան համար, քահանայական ասպարէզում, շնորհում եմ Զեզ իրաւունք՝ կրելու Խառայ Փիլոն»».

Առաջնորդ Ատրպատականի՝

Ներսէս Եպիս. Մ.-Թանգեան

Իր կնանքի վերջին տարիներին Տէր Ղեոնդը դարձել էր շատ բարեհամրոյը և հաճելի, հասարակութեան ամեն խաւերի համար. Արծէ յիշել նաև այն, որ 1921 թւի գարնան, երբ Հայաստանի տարապիրները թափւեցին Թաւրիզում, Տէր Ղեոնդը նրանցից քանի թանիսին կերպել, խնամել և հայրական հոգացողութեամբ օժանդակել է ամենքին. Նոյնպիսի վերաբերմունք ցոյց տւեց նաև Ղարադաղի հայ գաղթականներին, երբ նրանք մի քանի ամիս թշշւառ վիճակում ապշեցին Թաւրիզի Լիլաւայի Եկեղեցու բակում, 1921 թւի աշնան.

Եւ այսպէս քառասուն հինգ տարի (1878—1923) շարունակ Տէր Ղեոնդը Հայ ժողովրդի համեստ խաւերում աշխատեց ու տանջւեց իրեն ուսուցիչ և քահանայ՝ Տարոնում, Վասպուրականում և Ատրպատականում. Յաճախ հալածւած ուրիշներից, երեխն անհաշտ, տնտեսական ծանր պայմաններում, բազմանդամ ընտանիքի հոգսերով ծանրաբեռնաւած, իւր հայրենիքի կարօտը սրտին ծերացած, ուժասպառ, բայց հոգեպէս միշտ անընկճելի և յուսալից Տէր Ղեոնդը 1923 թւի մայիս ամսից սկսած անկողին ընկաւ և հետզհետէ հիւծւեց, նւազեց մինչև որ նոյն թւի Սեպտեմբերի 7-ին, երեկ. ժամի 4-ին, վախճանւեց, Թաւրիզի Լիլաւայի Եկեղեցու բակի այն խղճուկ բընակարանում, որտեղ ապրում էր նա իւր ընտանիքով, որը թողնելավ հինգ աղջիկ և երեք տղայ գաւակներ, որոնց մայրը մեռել էր 1912 թւին:

Սեպտեմբերի 9-ին, կիրակի օր, Լիլաւայի Ս. Սարգիս Եկեղեցում, կայացաւ հանդիսաւոր պատարագ և հանգուցեալի մարմնի վերջին օծումը. Յուղարկաւորութեան ներկայ էին Ատրպատականի Հայոց Թեմական Առաջնորդը, Թաւրիզի հայ ազգային—հասարակական հիմնարկութեանց, կուսակցութեանց և Կաթոլիկ ու Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչները, ինչպէս նաև Թաւրիզի ամբողջ հայ գաղութը, որոնք եկել էին իրենց վերջին յարգանքը տալու Տէր Ղեոնդին, յանուն այն քառասունհինգամենայ ծառայութեան, որը նա մատուցել էր իւր ժողովրդին».

Օժման արարողութիւնից յետոյ, երբ հանգուցեալի մարմինը գրին Եկեղեցոյ բակում, Ատրպատականի Հայոց Թեմական Առաջնորդ Գեր. Տէր Ներսէս Արքապ. Մելիք-Թանգեանը մի շատ գեղեցիկ և սրտառուչ դամբանական խօսեց, հարազատութեամբ ընորոշելով Տէր Ղեոնդի մարդկային արժանիքները, յատկապէս շեշտեց, որ Տէր Ղեոնդը

իւր կոչման արժանի հայ քահանայ էր եկեղեցասէր, ժողովրդանւէր, ազգային և հայրենասիրական զգացումներով տոգորւած մի իսկական հայ մարդ, որ տասնեակ տարիներով, կեանքի չարքաշ պայմաններում, նւիրուած և հաւատարիմ կերպով, ծառայել էր իւր ժողովրդին.

Ապա խուռներամ յուղարկաւորներն ուսամբարձ վերցրին իրենց սիրելի տէրտէրի դագաղը և թափօրը շարժւեց դէպի Թաւրիզի Հայոց Ազգային Հանգստարանը, որի մի լուռ ու խաղաղ անկիւնում, փորւած էր նրա զերեզմանը, իւր ցանկութեան համաձայն։

Երբ նրա դագաղը դրին գերեզմանի խոնաւ հողի վըրայ, ևս մի վերջին անգամ էլ նայեցի այդ 63 տարեկան ծերունի հայրենասէր մշեցուն։

Մի տխուր ժպիտ, մի ներքին թախիծ դրօշմւել էին նրա գունատ դէմքի վրայ. Աշքերը հանգարտ ու յաւերժապէս փակւած էին. Սպիտակ մօրուքը փռւած կըծըին, իսկ սառած շրթունքները, կարծես նրա հանգած հոգու և վըշտարեկ սրտի խորքերից, վերջին ըոպէին իսկ, մրմնչում էին Մշեցի հայրենազուրկ պանդուխտի՝ առ իւր սիրասուն Մայթ-Երկիրն ուղղած գովրի և կարօտի բնաշխարհիկ երգի այս տողերը.

«Մշու աշխարհ մշուշ է,  
Իր հողն ու ջուրն անուշ է,  
Հիւսիս քամին քշէ զիս,  
Իր ծոցին մշջ թաղէ զիս...».

## ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

### Էջ

15. Վերևից հաշւելով, 16-րդ տողից լետոյ կարդալ «Տարօնի Հայութեան բազմավաստակ Առաջնորդ Ներսէս Եպիս. Խարախանեանը հայրենանուէր և Սիմէօն վարդապետն անդրանիկ աքսորական»։
15. Ներքեւից հաշւելով, 3-րդ տողի վրայ. «Տատարկ Տարօնոյ» կարդալ՝ «Տատարկ Տարօնոյ»։
15. Ներքեւից 8-րդ տողի վրայ Սիսակ Գուեռումջեանից լետոյ կարդալ՝ «Պատուելի Յակոբ Գաբրիէլեան»։
16. Ներքեւից՝ 9-րդ տողի վրայ «Ախլքալաքցի Աբրօն» կարդալ՝ «Նաբին-Գարահիսարցի Աբրօն»։
19. Վերևից՝ 2-րդ տողի վրայ «Ուրանցի Արամը» կարդալ՝ «Ուրանցի Արամը»։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԻՄ ՀԵՑԵՆԵԱԼ  
ԶԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

4694

1. Վասպուրականի գրական մշակները. 1800—1920 թ.—  
Ընդարձակ կենսագրութիւններ՝ 60 լուսանկարներով, անտիպ գրու-  
թիւններ և նամակներ, մատենագրուկան մանրակրկիտ ծանօթու-  
թիւններով ևայլն. 1500 երես:

2. Վասպուրական աշխարհը ժմթ-քղ դարու ընթացքին.—  
Մասաւոր զարթօնքը, հասարակական, գրական, յեղափոխական և  
քաղաքական շարժումների մանրամասն պատմութիւնը, բազմաթիւ  
փաստաթղթերով և նկարներով. 2000 երես:

3. Հայրենի Յիշատակները.— Վասոյուրականի տեղագրու-  
թիւնը տեղական ժողովրդական դրոյցներով և տւանդութիւններով,  
պատմական անցքերի թռուցիկ վերջիշումները, ազգագրական սովո-  
րոյթները, հետաքրքիր ափակերի նկարագիրը, ուխտաւորի և ուղեսրի  
յուշեր և տպաւորութիւնները և այլն, բնաշխարհիկ նկարներով զար-  
դարւած. 2000 երես:

4. Խրիմեան Հայրիկ. — Մանրամասն կենսագրութիւնը նոր  
նիւթերով հարստացած, Հայրիկի կեանքից բնոյթագծեր և նրա եր-  
գիծող ոգուց նմոլչներ (անեկտուաններ 250 հատ) Հայրիկի անտիպ նա-  
մակներից 10 հատ: Մատենագիտական ընդարձակ տեղեկութիւններ  
Հայրիկի մասին, հանգուցեալ Վրթանէս Փափազեանի յառաջաբա-  
նով. Հայրիկի 20 հատ լուսանկարներով (անտիպ). 1500 երես:

5. Ժաղկարաղ Վասպուրականի հայ ժողովրդական բա-  
նահիսութեան թ. փոնչ. — Փողովրդական և աշուղական անտիպ  
երգեր, աւանդութիւններ և այլն. 500 երես:

6. Յեղափոխական շարժումները եւ Հ. Յաշնակցու-  
թեան զործունէութիւնը Վասպուրականում. 1890—1918. — Անց-  
քերի մանրամասն պատմութիւնը և անձերի ամփոփ կենսագրու-  
թիւնները, բազմաթիւ նկարներով. 500 երես:

7. Նահապետ Քուչակ. — Նոր յայտնութիւններ, երգեր և ա-  
ւանդութիւններ. 300 երես:


8. Խաչատոր Գ. Կաթողիկոս Աղթամարի. — Վերջին գըր-  
ւագը Աղթամարի կաթողիկոսութեան պատմութեան. 300 երես:

9. Յուցակ Հայերէն ծեռագրուց Թարիզի. (Հայր Յակ. Տաշ-  
եանի ծրագրով կազմւած): 500 երես:

10. Պատմագիտական ուսումնամիջութիւններն ու պեղում-  
ները Վասպուրականում. 1800—1915 թ. 500 երես:

2013

ՀՀ Ազգային գրադարան



## ԻՄ ԳՐՔԵՐԸ

	ԳԻՆ	ԱԼԵՆԹ
1. Սգապսակի Խելսանի. Պատկերազմբգ. Թիֆլիս. 1916. Տպր. օր. Ն. Աղանեանցի. 52 եր.(սպառած). —		
2. Նոյնի Երկրորդ տպազմբութիւն (սպառած). —		
3. Ծաղկաբաղ Վասպուրականի Հայ ժողովրդական բանահիմնութեան. Առաջին փունջ. Էջմիածն ծին. 1917. Տպարան Մալլ Աթոռոյ. 104 երես. 75		
4. Հայենի Յիշտակներ. Դէպի Նարեկոյ վանք. Էջմիածնին. 1919. Տպրն Մալլ Աթոռոյ. 16 երես. 30		
5. Թիւրքահայ Աղէտը. Պատմական փաստաթղթութեան. Էջմիածնին. 1919. Տպարան Մալլ Աթոռոյ. 48 եր. 50		
6. Խրիմեան Հայրիկ. Ծննդեան հարիւրամեակի առթիւ. 1820—1920. Պատկերազմբգ. Էջմիածնին. Տպարան Մալլ Աթոռոյ. 24 երես. 40		
7. «Բազին» Օրացոյց (Պատի) 1923 թ. Վ. Յովհանն Նիսեանի ընկերակցութեամբ. Թաւրիզ. Ատրպատականի Հայոց Թեմական Տպարան. (սպառած). —		
8. «Բազին» Օրացոյց (Պատի) 1923 թ. ընդարձակ լուսելու առօպ. Վ. Յովհաննիսեանի ընկերակցութեամբ. Թաւրիզ. 1923. Ատրպատակ. Հայոց Թեմական Տպարան. 128 երես. (սպառած). —		
9. «Մասիս», Օրացոյց (Պատի) 1924 թ. իւր լուել-ւաճով. Թաւրիզ 1924. Ատրպ. Հ. Թ. Տպրն. (սպռձ.). —		
10. Վենելի խնամայ Տէր Սևեսիսեան. Կեանքն ու Դործունէութիւնը. Թաւրիզ. 1924. Ատրպատականի Հայոց Թեմական Տպարան. 48 երես. 50		

Գինն է՝ Պարսկաստանում՝ 2 դրամ  
Արևոտնամանում՝ 50 սէնթ

Ստանալու համար դիմուլ Vahan Ter-Avétissian, Tauris (Perse).